

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 սեպտեմբերի 2008 թվականի N 1083-Ն

**«ՇՈԳՈՒ՝ ՄԻՆՉԵՎ 0.07 ՄՊա ՃՆՇՄԱՆ ՇՈԳԵԿԱԹՄԱՆԵՐԻ, ՋՐԻ՝ ՄԻՆՉԵՎ 388 Կ
ՋԵՐՄԱՍՏԻՃԱՆԻ ՋՐԱՏԱՔԱՑՈՒՑԻՉ ԿԱԹՄԱՆԵՐԻ ԵՎ ԿԱԹՄԱՅԱԿԱՆ
ՏԵՂԱԿԱՅԱՆՔՆԵՐԻ ՍԱՐՔՎԱԾՔԻ ՈՒ ԱՆՎՏԱՆԳ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ»
ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

«Ստանդարտացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի դրույթների պահանջի կատարումն ապահովելու նպատակով, ինչպես նաև հաշվի առնելով շոգեկաթսանների, ջրատաքացուցիչ կաթսանների և կաթսայական տեղակայանքների նախագծման, կառուցման և շահագործման ժամանակ մարդու կյանքին և առողջությանը, ֆիզիկական և իրավաբանական անձանց ու պետական գույքին, շրջակա միջավայրին վնաս պատճառելու ռիսկի աստիճանը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է**.

1. Հաստատել «Շոգու՝ մինչև 0,07 ՄՊա ճնշման շոգեկաթսանների, ջրի՝ մինչև 388 Կ ջերմաստիճանի ջրատաքացուցիչ կաթսանների և կաթսայական տեղակայանքների սարքվածքի ու անվտանգ շահագործման կանոններ» տեխնիկական կանոնակարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից 6 ամիս հետո:

Հայաստանի Հանրապետության
վարչապետ

Տ. Սարգսյան

2008 թ. հոկտեմբերի 2
Երևան

**ՇՈՔՈՒ՝ ՄԻՆՉԵՎ 0.07 ՄՊա ՃՆՇՄԱՆ ՇՈՔԵԿԱԹՄԱՆԵՐԻ, ՋՐԻ՝ ՄԻՆՉԵՎ 388 Կ
ՋԵՐՄԱՍՏԻՃԱՆԻ ՋՐԱՏԱՔԱՑՈՒՑԻՉ ԿԱԹՄԱՆԵՐԻ ԵՎ ԿԱԹՄԱՅԱԿԱՆ ՏԵՂԱԿԱՅԱՆՔՆԵՐԻ
ՍԱՐՔՎԱԾՔԻ ԵՎ ԱՆՎՏԱՆԳ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ**

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. ԿԻՐԱՌՄԱՆ ՈԼՈՐՏԸ

1. Սույն տեխնիկական կանոնակարգի (այսուհետ՝ ՏԿ) պահանջները տարածվում են որպես վառելիք բնական գազ կամ թեթև հեղուկ վառելիք օգտագործող շոգու՝ մինչև 0.07 ՄՊա ավելցուկային ճնշմամբ շոգեկաթսաների (այսուհետ՝ կաթսաներ) և 100 կՎտ և ավելի ջերմային հզորությամբ, ջրի տաքացման՝ մինչև 388 Կ (115 °C) ջերմաստիճանով ջրատաքացուցիչ կաթսաների (այսուհետ՝ կաթսաներ) վրա:

2. Տեխնիկական կանոնակարգի գործողությունը չի տարածվում հետևյալ արտադրատեսակների վրա՝

1) շարժական (փոխադրովի) լրակազմ կաթսաներ, որոնք նախատեսված են ժամանակավոր օբյեկտների ջերմամատակարարման համար.

2) ռազմական բնագավառում կիրառվող կաթսաներ, որոնք արտադրվում և շահագործվում են հատուկ տեխնիկական պահանջներով.

3) շարժական փոխադրամիջոցների վրա տեղակայվող կաթսաներ:

3. Տեխնիկական կանոնակարգը սահմանում է 1-ին կետում թվարկված կաթսաների նկատմամբ այն պահանջները, որոնց կատարմամբ ապահովվում է կաթսաների անվտանգ շահագործումը՝

1) կաթսաների կառուցվածքին առաջադրվող անվտանգության հիմնական պահանջները.

2) կաթսաների տեղակայման պայմանները սենքերում, որոնց կատարմամբ ապահովվում է աշխատատեղի անվտանգությունը շահագործման ժամանակ.

3) կաթսաների աշխատանքային հարաչափերի վերահսկման և անվտանգության ապահովման համակարգերին առաջադրվող պահանջները.

4) կաթսաների աշխատանքի համար անհրաժեշտ վառելիքի մատակարարման, էլեկտրամատակարարման, ջրամատակարարման և կոյուղացման համակարգերին առաջադրվող անվտանգության պահանջները.

5) կաթսաների շահագործման ժամանակ անվտանգության պահանջները.

6) կաթսայական տեղակայանքների անվտանգության նկատմամբ պետական վերահսկողության իրականացման մեխանիզմները:

4. Կաթսայական տեղակայանքների սենքերը պետք է համապատասխանեն ՀՀ քաղաքաշինության նախարարի 2001 թվականի հոկտեմբերի 1-ի «Նորմատիվատեխնիկական ակտերի կանոնակարգման մասին» հրամանի համաձայն ՀՀ-ում գործող ՄՆԻՊ II-35-76 «Կաթսայական կայանք» շինարարական նորմերի, ՄՄՊ 4.02-103-99 «Ջերմամատակարարման ինքնավար աղբյուրների նախագծում» նախագծման և շինարարության միջպետական կանոնների հավաքածուի և սույն տեխնիկական կանոնակարգի պահանջներին:

5. Կաթսայական տեղակայանքները պետք է նախագծվեն լիցենզավորված կազմակերպության

կողմից: Նախագծերը պետք է ենթարկվեն փորձաքննության՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6. Կաթսաների անվտանգ շահագործմանն ուղղված հուսալիության ցուցանիշները պետք է լինեն՝

1) հրաժարման միջին աշխատատևությունը՝ ոչ պակաս 3000 ժամ.

2) մինչև ներքին աղտոտումներից առաջին մաքրման աշխատատևությունը՝ ոչ պակաս 3000 ժամ.

3) հիմնանորոգումների միջև ծառայության ժամկետը՝ 3 տարի.

4) ծառայության լրիվ ժամկետները կախված ջերմային հզորությունից, տարվա ընթացքում կաթսայի մինչև 3000 ժամ աշխատելու դեպքում պետք է լինեն՝ մինչև 5 ՄՎտ՝ 10 տարի, 5-ից մինչև 35 ՄՎտ՝ 15 տարի, 35 ՄՎտ-ից բարձր՝ 20 տարի:

7. Կաթսայական տեղակայանքների գազամատակարարման և գազասպառման համակարգերը պետք է համապատասխանեն ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 22-ի N 2399-Ն որոշմամբ հաստատված «Անվտանգության կանոնները գազի տնտեսությունում» տեխնիկական կանոնակարգի պահանջներին, իսկ այդ համակարգի շահագործումը պետք է կատարվի ՀՀ կառավարության 2004 թվականի հոկտեմբերի 29-ի «Գազի տնտեսությունում տարրերի տեխնիկական շահագործման կանոններ և աշխատանքի անվտանգության պահանջներ տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N 1843-Ն որոշման պահանջների կատարմամբ:

8. Կաթսաների՝ որպես բարձր ճնշման տակ գտնվող անոթների պարբերական փորձարկումները պետք է կատարվեն սույն կանոնակարգով և արտադրող կազմակերպության համապատասխան հրահանգներով սահմանված կարգով ու պարբերականությամբ:

9. Եթե կաթսաների կամ կաթսայական տեղակայանքի այլ հանգույցներն արտադրող կազմակերպության փաստաթղթերով սահմանված են անվտանգության ապահովման սույն կանոնակարգի պահանջներից լրացուցիչ կամ տարբերվող այլ պահանջներ, ապա պետք է կատարվեն այն պահանջները, որոնք ապահովում են անվտանգության ավելի բարձր մակարդակ:

10. Կաթսայական տեղակայանքների հավաքակցման կամ նորոգման ժամանակ արգելվում է նախագծով նախատեսված անվտանգության վրա ազդող տարրերի փոխարինումը այլ տարրերով՝ առանց նախագծողի կամ այն արտադրող կազմակերպության՝ նրա ներկայացուցչի հետ համաձայնեցման:

11. Արտադրող կազմակերպության հրահանգով նախատեսված դեպքերում կաթսայական տեղակայանքները պետք է տեղակայվեն, փորձարկվեն և թողարկվեն արտադրող կազմակերպության կողմից լիազորված կազմակերպության կողմից, որը պարտավոր է երաշխավորել տեղակայանքների անվտանգությունը և հուսալի աշխատանքը երաշխիքային ժամկետում:

12. Կաթսայական տեղակայանքի կաթսաների և այլ հանգույցները պետք է ընտրվեն և նախագծվեն՝ հաշվի առնելով տեղակայանքի շահագործման և սպասարկման պայմանները, կաթսայի ռեժիմների հսկման ու կառավարման կենտրոնացված կարգավարական կետի առկայությունը, մշտական օպերատիվ անձնակազմ պահելու տնտեսական հիմնավորումները: Առանձին բնակելի շենքերի ջերմամատակարարման համար նախագծվող կաթսայական տեղակայանքները պետք է ունենան ռեժիմների կառավարման ավտոմատ համակարգեր՝ հեռակառավարման և հեռահսկման սարքերի կիրառման հնարավորությամբ:

13. Առանց սպասարկման կամ սահմանափակ սպասարկումով ավտոմատացված կաթսաների կիրառումը սպասարկման նշված եղանակով թույլատրվում է միայն այն տիպի կաթսաների համար,

որոնց կիրառման վերաբերյալ պետական իրավասու մարմինը տվել է գործարկման թույլտվություն՝ «Էներգետիկայի բնագավառում և էներգասպառման ոլորտում պետական վերահսկողության մասին» ՀՀ օրենքի համաձայն:

14. Կաթսաների սեյսմակայունությունը պետք է համապատասխանի դրանց տեղակայման վայրի սեյսմիկ նորմերին: Շենքերի վրա տեղակայվող կաթսայական տեղակայանքները չպետք է նվազեցնեն շենքերի սեյսմակայունության աստիճանը:

15. Մինչև սույն կանոնակարգի ընդունման պահը շահագործման հանձնված և շահագործվող կաթսայական տեղակայանքները, որոնց անվտանգության մակարդակը չի համապատասխանում սույն կանոնակարգով սահմանված անվտանգության էական պահանջներին, ենթակա են վերակառուցման՝ իրավասու պետական մարմնի կողմից սահմանված և սեփականատիրոջ հետ համաձայնեցված խելամիտ ժամկետներում: Պետական մարմինը վերակառուցման ժամկետներ սահմանելիս հաշվի է առնում վտանգի աստիճանը և դրա հետևանքների ծանրությունը հանրության համար:

2. ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

16. Սույն տեխնիկական կանոնակարգում կիրառված են հետևյալ հասկացությունները՝

1) **Շոգեկաթսա՝** սարքվածք, որն ունի այրվող օրգանական վառելիքի արգասիքներով տաքացվող մակերևույթներ, և որը նախատեսված է սարքվածքից դուրս օգտագործվող, մթնոլորտայինից բարձր ճնշման շոգի ստանալու համար.

2) **Ջրատաքացուցիչ կաթսա՝** սարքվածք, որն ունի դրանում այրվող օրգանական վառելիքի արգասիքներով տաքացվող մակերևույթներ, որը նախատեսված է սարքվածքից դուրս որպես ջերմատար օգտագործվող, մթնոլորտայինից բարձր ճնշման տաք ջրի ստացման համար.

3) **Էկոնոմայգեր՝** ջերմափոխանակման սարքվածք, որը տաքանում է վառելիքի այրման արգասիքներով և նախատեսված է շոգեկաթսա մատակարարվող ջրի տաքացման կամ տաքացման և մասնակի գոլորշիացման համար.

4) **Կաթսայի վկայագրում՝** կաթսայի տեխնիկական զննումը, «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքի համաձայն փորձագիտական եզրակացության տրամադրումը և գրանցումը ռեեստրում, որն իրականացվում է պարբերաբար՝ կաթսայի ծառայության հաշվարկային ժամկետի ընթացքում (անվտանգ աշխատանքի հաշվարկային ռեսուրսի վերջանալուց անկախ), ինչպես նաև կաթսայի վթարից և դրա ճնշման տակ աշխատող տարրերի հայտնաբերված վնասվածքներից, որպեսզի որոշվեն հետագա շահագործման թույլատրելիությունը, հարաչափերը և պայմանները.

5) **Կաթսայական տեղակայանք՝** էներգատեղակայանք, որն իր մեջ ներառում է բուն կաթսան և նրա հուսալի ու անվտանգ աշխատանքի համար անհրաժեշտ օժանդակ սարքվածքներ, որոնք միմիանց հետ կապված են տեխնոլոգիական կապերով.

6) **Հաշվարկային ճնշում՝** առավելագույն ավելցուկային ճնշումը կաթսայում (տարրում), որի հիման վրա հիմնական չափսերի ընտրության ժամանակ իրականացվում է ամրության հաշվարկ, որն ապահովում է հուսալի աշխատանքը հաշվարկային ռեսուրսի ընթացքում.

7) **Թույլատրելի ճնշում՝** կաթսայի (տարրի) առավելագույն թույլատրելի ավելցուկային ճնշումը, որը սահմանված է տեխնիկական վկայագրման արդյունքների կամ ամրության ստուգողական հաշվարկների հիման վրա.

8) **Աշխատանքային ճնշում՝** շահագործման բնականոն պայմաններում առավելագույն ճնշումը.

9) **Փորձարկման ճնշում**՝ ճնշում, որով պետք է իրականացվի կաթսայի և դրա տարրերի հիդրավլիկական փորձարկումը ամրության և կիպության առումով.

10) **Կաթսայի տարր**՝ կաթսայի հավաքովի միավոր, որը նախատեսված է կաթսայի հիմնական գործառնություններից մեկի կատարման համար (օրինակ՝ կոլեկտոր, թմբուկ, շոգետաքացուցիչ, տաքացման մակերևույթ և այլն).

11) **Սպասարկվող կաթսա**՝ կաթսա, որը որակավորված օպերատորի ուղղակի հսկողության տակ է այն բոլոր դեպքերում, երբ կաթսայում շոգի (տաք ջուր) է առաջանում կամ էլ դրանից շոգի (տաք ջուր) է վերցվում.

12) **Կաթսայի կառավարման համակարգ**՝ համակարգ, որը կառավարում է ամբողջ կաթսայի գործունեությունը՝ ներառյալ էներգիայի մուտքի կառավարման համակարգ, ջրի մակարդակի կառավարման համակարգը, տազնապի ազդանշանի համակարգը, ճնշման կառավարման տարրերը, պաշտպանական սարքերը, բոլոր գործիքները և շղթաները.

13) **Կաթսայի անվտանգության կառավարման տարրեր**՝ միջոցներ, որոնցից կախված է կաթսայի անվտանգությունը, և որոնց հրաժարումը չպետք է բերի վտանգավոր հետևանքների: Դրանք ընդգրկում են բլոկավորումները, բոցի հսկման սարքերը, գերճնշման կամ թերճնշման անջատիչները և այլն.

14) **Կաթսայի անվտանգության կառավարման համակարգ**՝ կաթսայի կամ նրա առանձին տարրերի աշխատանքային հարաչափերը անվտանգության կառավարման տարրերի միջոցով հսկող և հարաչափերի վտանգավոր մեծությունների դեպքում որոշակի հաջորդականությամբ կաթսայի աշխատանքը լրիվ դադարեցնող համակարգ.

15) **Լրիվ դադարեցում**՝ գործողություն, որի դեպքում կաթսան անմիջապես և արդյունավետ կերպով մեկուսացված է վառելիքի և հոսանքի բոլոր աղբյուրներից, և կառավարման տարրերը կարող են վերագործարկվել միայն ձեռքով.

16) **Սահմանափակ սպասարկվող կաթսա**՝ կաթսա, որը ստուգվում է կանոնավոր կերպով ժամանակի նշանակված միջակայքերում և կարող է ցանկացած պահի գտնվել որակավորված օպերատորի՝ ուղղակի ձեռքով կառավարման տակ, երբ սպասարկվող կաթսային վերաբերող բոլոր պահանջները կատարված են.

17) **Մասնագիտացված սպասարկող կազմակերպություն**՝ իրավաբանական անձ, որն ունի համապատասխան որակավորում և որը պայմանագրի հիման վրա կատարում է այլ անձի պատկանող կաթսայի (կաթսայական տեղակայանքի) մասնակի կամ ամբողջական սպասարկում.

18) **Ճնշմամբ փորձարկում**՝ հիդրավլիկական կամ պնևմատիկ փորձարկում, որն իրականացվել է անվտանգ աշխատանքային ճնշումից՝ սահմանված չափի ճնշում գործադրելով ճնշումնային սարքավորման ճնշումը պահպանող մասերի կամ բաժանմունքների վրա, որպեսզի փորձարկի կառույցի ճնշման ամբողջականությունը (աշխատունակությունը) կամ դրա վրա կատարված փոփոխությունների կամ նորոգումների համարժեքությունը.

19) **Չսպասարկվող կաթսա**՝ կաթսա, որը կարող է գործարկվել, շահագործվել և անջատվել միայն կաթսայի կառավարման համակարգի հսկողության և անվտանգության համակարգի առկայությամբ: Եթե կառավարման համակարգերի խափանման պայման է առաջ գալիս, կաթսան ավտոմատ անջատվում է մինչև խափանումը վերացվի սպասարկող կամ պատասխանատու անձի կողմից, իսկ ամբողջ համակարգը փորձարկվի և պատասխանատու անձի կողմից ստուգվի դրա բավարար լինելը.

20) **Կարգավարական կետ**՝ կաթսայական տեղակայանքի չափիչ և հսկիչ սարքերի և անվտանգության ու կառավարման համակարգերի աշխատանքի վերաբերյալ անընդհատ

օպերատիվ տեղեկատվության ընդունման տեղ, որտեղ կազմակերպված է օպերատորի մշտական հերթապահություն՝ մեկ կամ ավելի կաթսայական տեղակայանքի աշխատանքային ռեժիմները հսկելու և(կամ) կառավարելու համար.

21) **Անվտանգության էական պահանջներ**՝ կաթսաների կամ կաթսայական տեղակայանքների կառուցվածքի, փորձարկումների, շահագործման վերաբերյալ սույն կանոնակարգով սահմանված տեխնիկական և կազմակերպչական նորմեր, որոնց կատարման դեպքում կաթսաների կամ կաթսայական տեղակայանքների վտանգավոր ու վնասակար գործոնների ազդեցության ռիսկերը գնահատվում են որպես թույլատրելի մակարդակի ռիսկեր:

II. ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԷԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ ԿԱԹՍԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ

3. ԿԱԹՍԱՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԿԻՐԱՌՎՈՂ ՆՅՈՒԹԵՐԸ

17. Կաթսաների և դրանց հիմնական մասերի կառուցվածքին ներկայացվող հիմնական պահանջը նրանց հուսալի և անվտանգ շահագործման ապահովումն է՝ հաշվարկային հարաչափերով տեխնիկական պայմաններում ընդունված անվտանգ աշխատանքի հաշվարկային ռեսուրսի ընթացքում, ինչպես նաև տեխնիկական զննման, մաքրման, լվացման և նորոգման հնարավորությունը:

18. Կաթսայի կառուցվածքի և նրա նախագծի բոլոր փոփոխությունները, որոնց անհրաժեշտությունը առաջացել է նորոգման կամ կարգաբերման ընթացքում, պետք է համաձայնեցվեն նախագծային կամ արտադրող կազմակերպության հետ:

19. Կաթսայի կառուցվածքը պետք է ապահովի դրա տարրերի հավասարաչափ տաքացումը թողարկման և բնականոն աշխատանքային ռեժիմում աշխատելու ընթացքում, ինչպես նաև առանձին մասերի ջերմային ընդարձակման հնարավորությունը:

20. Ուղղաձիգ գլանաձև կաթսաների համար ստորին թույլատրելի մակարդակի դիրքը որոշվում է նախագծող կազմակերպության կողմից՝ կաթսայի տարրերի պատերի գերտաքացում թույլ չտալու պայմանով: Մտող ջրի ներանցման սարքվածքի և վերաշրջանառության խողովակների միացումը, ինչպես նաև սնող ջրի բաշխումը կաթսայի մեջ չպետք է առաջացնեն կաթսայի տարրերի տեղային հովացում:

21. Կաթսաների տաքացվող տարրերը, որոնք չունեն բավարար սառեցում ջերմատարի միջոցով, պետք է ծածկված լինեն ջերմամեկուսացումով, որը կկանխի թույլատրելի ջերմաստիճանից ավելի բարձր դրանց տաքացումը: Կաթսաների տարրերը, որոնք չեն հանդիսանում տաքացման մակերևույթներ, և որոնց վրա հնարավոր է թույլատրելի ջերմաստիճանից ավելի բարձր տաքացում, պետք է հուսալիորեն ջերմամեկուսացված լինեն:

22. Կաթսաների և խողովակաշարերի տարրերի բարձր ջերմաստիճան ունեցող մակերեսների մասերը, որոնք մատչելի են սպասարկող անձնակազմի համար, պետք է լինեն ջերմամեկուսացված, որն ապահովի արտաքին մակերեսի ջերմաստիճանի բարձրացումը ոչ ավելի, քան 318 Կ (45 °C), երբ շրջակա միջավայրի ջերմաստիճանը ոչ ավելի է, քան 298 Կ (25 °C):

23. Կաթսայի այլ մակերևույթների, կառավարման սարքերի և օժանդակ այլ սարքերի ջերմաստիճանը չպետք է գերազանցի՝

1) բռնակներ, կոթեր, այլ հարմարանքներ, որոնց գործածության ընթացքում աշխատողները շփվում են միայն կարճ ժամանակ.

ա. մետաղից՝

35 °C,

բ. հախճապակուց կամ ապակու հանքանյութից՝ 45 °C,

գ. պլաստիկից, ռետինից կամ փայտից՝ 60 °C.

2) մասեր, որոնց բնականոն աշխատանքի ընթացքում հնարավոր է պատահական հպում՝
ա. մետաղից՝ 60 °C,

բ. էմալպատված պողպատե կամ համանման մակերևույթներ 95 °C,

գ. պլաստիկից, ռետինից կամ փայտից՝ 100 °C.

3) շարժիչների մասերի ջերմաստիճանը չպետք է գերազանցի արտադրող կազմակերպության սահմանածը:

24. Կաթսաների թմբուկներում մտոցները պետք է լինեն կյոր, էլիպսաձև կամ ձվաձև, դրանց տրամագիծը պետք է լինի 400 մմ-ից ոչ պակաս, իսկ էլիպսաձև և ձվաձև մտոցների չափերը՝ ոչ պակաս, քան 300x400 մմ:

25. Կաթսաների հնոցների և գազանցքերի որմնապատվածքում պետք է լինեն մտոցներ՝ ուղղանկյունաձև, 400x450 մմ-ից ոչ պակաս կամ կլոր 450 մմ-ից ոչ պակաս տրամագծով: Թուջե կաթսաների հնոցների և բաժինների արտաքին մակերևույթների գննման և մաքրման համար գազանցքերում պետք է նախատեսվեն դռնակներով փակվող փոքրիկ անցքեր, որոնց բացվածքի ամենափոքր չափը 80 մմ-ից ոչ պակաս է: Փոքրիկ անցքերի թիվը և դիրքը կաթսայի տարրերի վրա սահմանվում է սարքվածքը մշակողի (նախագծողի) կողմից:

26. Մտոցների դռները պետք է ունենան ամուր փակեր, որոնք բացառեն ինքնաբերաբար բացման հնարավորությունը և ապահովեն բավարար կիպություն:

27. Գազային, հեղուկ վառելիքի կամ խցային այրման հնոց ունեցող յուրաքանչյուր կաթսա պետք է ունենա պայթուցիկ ապահովիչ փական: Պայթուցիկ ապահովիչ փականները պետք է տեղադրվեն այնպիսի տեղերում, որը բացառի սպասարկող անձնակազմի մարմնական վնասվածք ստանալը: Սպասարկող անձնակազմի համար անվտանգ տեղերում տեղակայման անհնարինության դեպքում պայթուցիկ փականներն ապահովվում են արտուղման տուփախողովակներ կամ մարդկանց գտնվելու կողմում պատում են անդրադարձնող վահաններով: Պայթուցիկ ապահովիչ կափույրների թիվը, դրանց տեղադրումը և կտրվածքի չափերը որոշում է նախագծող կազմակերպությունը՝ կախված կաթսաների կառուցվածքից, ընդ որում մեկ պայթուցիկ փականի մակերեսը պետք է լինի 0.05 մ²-ուց ոչ պակաս: Վառելիքի խցային այրմամբ կաթսաների համար մեկ պայթուցիկ կափույրի մակերեսը պետք է լինի 0.1 մ-ից ոչ պակաս:

28. Կաթսայի կառուցվածքը պետք է ապահովի ջրի և նստվածքների լրիվ դատարկումը, ինչպես նաև օդի և այլ գազերի հեռացումը բոլոր տարրերի ներսից:

29. Հեղուկ վառելիքի այրման դեպքում այրիչների փողրակների տակ պետք է տեղադրվեն ավազով տակդիրներ, որպեսզի կանխեն վառելիքի թափվելը կաթսայատան հատակին:

30. Կաթսաների պատրաստման համար կիրառվող նյութերը և արտադրատեսակները պետք է ունենան համապատասխան աշխատանքային ռետուրս՝ տեխնիկական պայմաններով նախատեսված՝ կաթսայի ծառայության ամբողջ ժամկետում անխափան աշխատանքի համար: Կաթսաների հանգույցների, մանրակների եռակցման տեխնոլոգիական պահանջները սահմանվում են կաթսայի պատրաստման տեխնոլոգիական փաստաթղթերով: Կաթսայի վրա կամ նրա ջերմային ազդեցության գոտում գտնվող պլաստիկ նյութերից մանրակները պետք է կայուն լինեն ջերմային ազդեցության նկատմամբ և չենթարկվեն ձևափոխումների կաթսայի ծառայության ամբողջ ընթացքում:

31. Աշխատող միջավայրի ճնշման տակ գտնվող պողպատյա հավաքվածք միավորները պետք է

դիմակայեն ստատիկ ամրության հիդրավլիկ փորձարկմանը ոչ պակաս կրկնակի, իսկ թուջե սեկցիաների դեպքում՝ ոչ պակաս քառապատիկ աշխատանքային ճնշման մեծությամբ:

32. Կաթսայի կառուցվածքը պետք է հնարավորություն տա հարմար ձևով կարգավորման սարքերի կարգաբերման և հսկիչ-չափիչ սարքերի, այրիչի տեսողական հսկման համար, իսկ հեղուկ վառելիքով կաթսաների համար պետք է ապահովվի նաև հնոցի սպասարկման հարմարությունը: Եթե կաթսայի մաքրման և սպասարկման համար անհրաժեշտ են հատուկ հարմարանքներ ու գործիքներ, ապա դրանք պետք է ներառված լինեն կաթսայի արտադրող կազմակերպության լրակազմի մեջ:

33. Կաթսան պետք է ունենա արտափչման խողովակներ՝ փակման արմատուրներով, որոնցով ապահովվում է նստվածքների ու ջրի հեռացումը կաթսայի ներքին մասերի տարրերից, և օդի և այլ գազերի հեռացումը՝ վերին մասերի տարրերից:

34. Արգելվում է պարուրակային միացման կիրառումը կաթսայական տեղակայանքի 80 մմ տրամագիծը գերազանցող մայրուղային խողովակների դեպքում:

35. Ջրատաքացուցիչ կաթսան պետք է լինի գազակիպ: Կաթսաները, որոնց հնոցները նախատեսված են ճնշման ներմղմամբ աշխատանքի համար, պետք է ապահովեն հեռացող ծխագազերի ծավալի ոչ ավելի 2 % հոսակորուստ՝ անվանական ջերմարտադրության, հնոցում 120 % անվանական աերոդինամիկական դիմադրության դեպքում: Գազային կամ հեղուկ վառելիքով աշխատող օդի փչմամբ այրիչներով կաթսաներում, որոնց հնոցը նախատեսված է նոսրացման տակ աշխատանքի համար, հնոցում 5 Պա ճնշման (նոսրացման) դեպքում պետք է ապահովեն, որ օդի ներծծումը չգերազանցի այրման արգասիքների ծավալի 1 %-ը՝ անվանական ջերմարտադրության դեպքում:

36. Կաթսայի ջերմամեկուսացման և ձայնամեկուսացման համար կիրառվող նյութերը պետք է լինեն ջերմակայուն և ջրակայուն, պաշտպանված լինեն շահագործման ժամանակ առաջացող մեխանիկական վնասվածքներից և հնարավոր վնասակար նյութերից: Մեկուսիչ նյութերի հետ շփվող գազատար մասերը պետք է կայուն լինեն մեկուսիչ նյութի ազդեցության նկատմամբ կամ լինեն պաշտպանված այդ ազդեցությունից: Մեկուսիչ նյութերի՝ համապատասխան ստանդարտով սահմանված հատկանիշները պետք է պահպանվեն կաթսայի ծառայության ամբողջ ժամկետի ընթացքում:

37. Կաթսայի լրակազմի մեջ մտնող սարքերը (պոմպեր, այրիչներ և այլն) պետք է տեղակայված լինեն այնպես, որ հնարավորին չափ հեշտ լինի դրանց սպասարկումը կամ փոխարինումը: Սարքերի արտադրող կազմակերպության պիտակները պետք է տեսանելի լինեն առանց դրանց ապատեղակայման: Պոմպերի կցաշուրթերը պետք է լինեն պոմպի երկու կողմերում, որպեսզի հեշտ լինի դրա փոխարինումը: Պոմպի երկու կողմերում պետք է տեղադրվեն փակման փականներ:

38. Կաթսաները, որոնք արտադրող կազմակերպության կողմից նախատեսված են կոնդենսացիոն ռեժիմում աշխատելու համար, պետք է ունենան կոնդենսատի հավաքման և հեռացման միջոցներ, որը պետք է ունենա քիմիական մշակման հնարավորություն: Կոնդենսատը մինչև մաքրելը պետք է շփվի միայն այն մակերեսների հետ, որոնք պաշտպանված են կոռոզիայից:

39. Արտադրողի կողմից ոչ կոնդենսացիոն ռեժիմում աշխատելու համար նախատեսված կաթսաներում, որոնք ունակ են հետադարձ ջրի մինչև 50 °C դեպքում աշխատելու համար, կոնդենսացիա չպետք է առաջանա հնոցում կամ ծխագազերի հեռացման ուղիներում, երբ աշխատում են ջերմային հավասարակշռված ռեժիմներում՝ արտադրող կազմակերպության հրահանգներում նշած հետադարձ ջրի նվազագույն ջերմաստիճանում:

40. Կաթսայական տեղակայանքներում օգտագործվող ճկուն խողովակները պետք է ունենան մետաղե պատյան և պտուտակված ընդլայնված միացումներ: Դրանք պետք է դիմանան աշխատանքային ճնշման եռապատիկին, բայց ոչ պակաս 3 բար նվազագույն և առավելագույն ջերմաստիճանների դեպքերում: Պետք է էլեկտրական շղթայի անընդհատություն ապահովվի խողովակների ամբողջ երկարության համար:

4. ԾԽԱՏԱՐ ԵՎ ՕԴԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ

41. Կաթսան պետք է նախագծված լինի այնպես, որ այրման արգասիքները բոլոր ռեժիմներում հեռանան միայն ծխատարով: Ծխատարի կտրվածքը, բարձրությունը, սահափականների կիրառման անհրաժեշտությունը և տեղակայման հեռավորությունը շինություններից, շենքերից և դրանց հրդեհավտանգ կամ պայթյունավտանգ մասերից պետք է համապատասխանեն ՄՆԻՊ II-35-76 շինարարական նորմերին, ինչպես նաև արտադրող կազմակերպության հրահանգներին:

42. Կաթսայի չկարգավորվող սահափականը պետք է ունենա ուղեկապման հարմարանք, որը ապահովում է կաթսայի բոցավառման սկսվելը միայն սահափականի լրիվ բաց դիրքում:

43. Ծխատարի սահափականը կարող է լինել ավտոմատ և ունենա ուղեկապման հարմարանք, որը բացառում է հնոցում այրման ռեժիմի խախտումը, թերայրումը կամ կաթսայի գործարկումը սահափականի փակ դիրքում: Բացի այդ, կաթսան պետք է սարքավորված լինի նաև անվտանգ գործարկումը ստուգող սարքով, որը կանխում է սահափականի բացումը, եթե ուղեկապման սարքերը սխալ դիրքում են:

44. Այրման համար անհրաժեշտ օդի սահափականները պետք է լինեն ավտոմատ կառավարվող:

45. Կաթսաների ծխնելույզների տեղակայման պայմանները սահմանվում են համապատասխան շինարարական նորմերով: Բոլոր տեսակի ծխատարները պարտադիր պետք է ունենան 2.5 աստիճանից ոչ պակաս թեքություն դեպի վեր՝ ծխագազերի հոսքի ուղղությամբ:

46. Կաթսաների ծխնելույզները պետք է նախագծվեն այնպես, որ աշխատեն «չոր» ռեժիմում (առանց ծխագազերում գոլորշու կոնդենսացման): Դրա անհնարինության դեպքում պետք է նախատեսվի կոնդենսատի հավաքման և հեռացման մշտական գործող համակարգ:

5. ԳԱԶԻ ԱՅՐԻՉՆԵՐ

47. Գազի այրիչների համակարգը, որն իր մեջ ներառում է գազի ներհոսքի տեղից մինչև ներարկիչը, կհամարվի անվտանգ, եթե ստուգվի արտադրող կազմակերպության կողմից տրված գազի առավելագույն ճնշումից 1.5 անգամ մեծ ճնշմամբ: Համակարգը համարվում է բավարարող անվտանգության պահանջին, եթե հոսակորուստը փոքր է 85 սմ³-ից 1 ժամում:

48. Սահմանափակ սպասարկումով կամ չսպասարկվող կաթսաների համար առավելապես պետք է օգտագործվեն ավտոմատ այրիչների համակարգեր, որոնք ապահովում են անջատված վիճակից կաթսաների ավտոմատ գործարկումը, հզորության հավաքումը՝ մինչև տրված մեծությունը և ավտոմատ կարգավորումը: Ոչ ավտոմատ այրիչներ կարող են օգտագործվել տեղական մշտական հերթապահությամբ կաթսայական տեղակայանքներում, տնտեսական հիմնավորման դեպքերում:

49. Ձեռքով կառավարվող գազի փականները պետք է լինեն 90 աստիճան պտտվող տեսակի: Փականների «բաց» և «փակ» դիրքերը պետք է նշանակված լինեն և հեշտ տարբերվեն: Միայն «բաց» և «փակ» դիրքերով աշխատեցվող փականները պետք է ֆիքսվեն այդ դիրքերում:

6. ԿԱԹՍԱՅԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ, ՀԱՎԱՔԱԿՑՈՒՄԸ, ՆՈՐՈԳՈՒՄԸ

50. Կաթսաների և դրանց տարրերի պատրաստումը, հավաքակցումը, նորոգումը պետք է իրականացնեն ՀՀ օրենսդրության համաձայն լիցենզավորված կազմակերպությունները:

51. Կաթսաների եռակցման միացումների որակի հսկողությունը պետք է իրականացնել հետևյալ մեթոդներով՝

- 1) բոլոր եռակցված միացումների արտաքին զննում և չափում.
- 2) մեխանիկական փորձարկումներ.
- 3) ուլտրաձայնային կամ ռադիոգրաֆիական մեթոդներով հսկում.
- 4) հիդրավլիկ փորձարկումներ:

52. Եռակցվող միացման որակի գնահատման նորմերն ըստ արտաքին զննման և չափումների արդյունքների պետք է նշվեն արտադրանքի պատրաստման տեխնիկական պայմաններում և այլ նորմատիվ փաստաթղթերում: Եռակցման միացումների մեխանիկական փորձարկումներն իրականացվում են ԳՕՍՏ 6996 և ԳՕՍՏ 9454-ի պահանջների համաձայն: Մեխանիկական փորձարկումների պարտադիր տեսակներն են ձգման, խզման կամ էլ սեղմման փորձարկումները:

53. Ուլտրաձայնային կամ ռադիոգրաֆիական մեթոդներով եռակցման միացումների հսկման ծավալը որոշվում է պատրաստման տեխնիկական պայմաններով: Հիդրավլիկական փորձարկումների դեպքում կիրառվող փորձարկման ճնշումը պետք է կազմի բանվորական ճնշման 1.5-պատիկը, բայց ոչ պակաս 0.2 ՄՊա:

54. Հիդրավլիկական փորձարկումները պետք է կատարել 278 Կ-ից (5 °C) ոչ պակաս ջերմաստիճանով և ոչ ավելի, քան 313 Կ (40 °C) ջրով: Կաթսայի փորձնական ճնշման տակ պահպանման ժամանակը չպետք է լինի պակաս 10 րոպեից: Ճնշման անկում փորձարկման ժամանակ չի թույլատրվում:

55. Կաթսայի թմբուկի կամ յուրաքանչյուր կաթսայի ճակատային մասի հատակին պետք է փակցվի մետաղական ցուցատախտակ՝ դրա վրա հետևյալ տվյալների գրանցումով՝

- 1) պատրաստող արտադրող կազմակերպության անվանումը կամ ապրանքանշանը.
- բ. կաթսայի անվանումը կամ պայմանական նշանակումը,
- գ. արտադրող կազմակերպության կողմից տրվող համարը,
- դ. արտադրության տարին,
- ե. աշխատանքային ճնշումը,
- զ. ջրի (ջրատաքացուցիչ կաթսայի համար) ջերմաստիճանը:

56. Յուրաքանչյուր կաթսա պետք է պատվիրատուին մատակարարվի անձնագրով: Կաթսայի տեխնիկական անձնագիրը պետք է պարունակի առնվազն հետևյալ տեղեկատվությունը՝

- 1) կաթսայի և նրա առանձին հանգույցների հարաչափերի արժեքները.
- 2) կաթսայի հիմնական և օժանդակ էներգիայի պարամետրերը՝ դրանց արժեքները՝ թույլատրելի շեղումներով.
- 3) տեղակայման պայմանները.
- 4) շահագործման, սպասարկման և նորոգման պարբերականությունն ու անվանացանկը.
- 5) հիմնական և օժանդակ հանգույցների ծառայության ժամկետները:

7. ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԷԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ ԿԱԹՍԱՅԱԿԱՆ ՏԵՂԱԿԱՑԱՆՔՆԵՐԻ ՍԵՆՔԵՐԻ ՀԱՄԱՐ

57. Մնայուն տեղակայվող կաթսաները պետք է տեղակայվեն շենքերում և սենքերում, որոնք համապատասխանում են ՀՀ քաղաքաշինության նախարարի 2001 թվականի հոկտեմբերի 1-ի «Նորմատիվատեխնիկական ակտերի կանոնակարգման մասին» հրամանի համաձայն ՀՀ-ում գործող ՄՆԲՊ II-35-76 «Կաթսայական կայանք» շինարարական նորմերի, ՄՍՊ 4.02-103-99 «Ջերմամատակարարման ինքնավար աղբյուրների նախագծում» նախագծման և շինարարության միջպետական կանոնների հավաքածուի, և ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 22-ի «Անվտանգության կանոնները գազի տնտեսությունում տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N 2399-Ն որոշմամբ և սույն տեխնիկական կանոնակարգով սահմանված պահանջներին: Կաթսաների տեղակայումը սենքերից դուրս թույլ է տրվում միայն այն դեպքում, երբ կաթսան նախագծված է տվյալ վայրի կլիմայական պայմաններում աշխատելու համար:

58. Կաթսաների վրա սենքերի և ձեղնահարկերի ծածկերի կառուցում չի թույլատրվում: Տվյալ պահանջը չի տարածվում այն կաթսաների վրա, որոնք սույն ՏԿ-ի 59-րդ կետին համապատասխան տեղակայված են արտադրական սենքերում:

59. Արտադրական սենքերի ներսում թույլատրվում է հետևյալի տեղակայումը`

1) շոգեկաթսաներ, որոնք բավարարում են $(t - 100) \cdot V \leq 100$ (յուրաքանչյուր կաթսայի համար), որտեղ t -ն հազեցած շոգու ջերմաստիճանն է` աշխատանքային ճնշման դեպքում, °C, V -ն` կաթսայի ջրի ծավալը, մ³:

2) 2,5 ՄՎտ-ից (2,15 Գկալ/ժ) ոչ ավելի ջերմարտադրողականությամբ, թմբուկ չունեցող ջրատաքացուցիչ կաթսաներ:

60. Շահագործվող բազմաբնակարան շենքերին կից կամ դրանց տանիքի վրա ինքնավար կաթսայատուն կարող է տեղակայվել շենքի շինությունների սեփականատերերի կողմից «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով տրված համաձայնության հիման վրա` ապահովելով շինարարական, հրդեհային անվտանգության և սանիտարահիգիենիկ նորմերի պարտադիր պահանջների կատարումը:

61. Արտադրական սենքերի մեջ կաթսաների տեղակայման տեղը պետք է անջատված լինի սենքի մնացած մասից չհրկիզվող միջնորմերով կաթսայի ամբողջ բարձրությամբ, բայց 2 մ-ից ոչ պակաս, դռների տեղակայումով: Ելքերի տեղադրման տեղերը և դռների բացման ուղղությունները որոշվում են նախագծող կազմակերպության կողմից` ելնելով տեղական պայմաններից:

62. Կաթսայական տեղակայանքը կարող է նախագծվել ինչպես տեղում մշտական սպասարկող անձնակազմով և շուրջօրյա հերթապահությամբ, այնպես էլ կարգավարական կետից աշխատանքի վերահսկմամբ` ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 22-ի «Անվտանգության կանոնները գազի տնտեսությունում տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N 2399-Ն որոշման պահանջների կատարմամբ: Եթե կաթսայական տեղակայանքը նախագծի համաձայն պետք է շահագործվի տեղում սպասարկող անձնակազմի մշտական հերթապահությամբ, ապա այդ անձնակազմի համար պետք է նախատեսվի սանիտարական նորմերին համապատասխանող կենցաղային և ծառայողական սենքեր:

63. Կաթսայական տեղակայանքի շենքի յուրաքանչյուր հարկում պետք է լինի երկուսից ոչ պակաս ելք` տեղակայված սենքերի հակադիր ծայրերում: Թույլ է տրվում մեկ ելք, եթե հարկի մակերեսը 200 քառ.մ-ից պակաս է և կա երկրորդ էվակուացիոն ելք դեպի անշարժ արտաքին աստիճանները, իսկ մեկ հարկանի կաթսայական տեղակայանքներում` սենքի երկայնքով կաթսայի ճակատով ոչ ավելի, քան 12 մ: Կաթսայական տեղակայանքի սենքից ելք համարվում է ինչպես անմիջականորեն ելքը դեպի դուրս, այնպես էլ ելք դեպի աստիճանավանդակ կամ նախամուտք:

64. Կաթսայական տեղակայանքի սենքից դեպի շրջակա միջավայր դռները պետք է բացվեն դեպի դուրս՝ ձեռքի սեղմումից, չպետք է ունենան փական և կաթսաների աշխատանքի ժամանակ չպետք է կողպվեն: Ելքի դռները կաթսայական տեղակայանքից դեպի ծառայողական, կենցաղային, ինչպես նաև օժանդակ արտադրական սենքեր պետք է ունենան զսպանակներ և բացվեն դեպի կաթսայի կողմը: Կաթսայական տեղակայանքի սենքի մուտքի դռներից յուրաքանչյուրի վրա պետք է գրություն լինի, որն արգելի կողմնակի մարդկանց մուտքը կաթսայական տեղակայանք:

65. Կաթսայական տեղակայանքի սենքերը պետք է ապահովված լինեն բավարար բնական լույսով, իսկ գիշերները՝ էլեկտրական լուսավորությամբ: Այն տեղերը, որտեղ տեխնիկական պատճառներով հնարավոր չէ ապահովել բնական լուսավորություն, պետք է ունենան էլեկտրական լուսավորություն: Լուսավորվածությունը պետք է համապատասխանի ՀՀ քաղաքաշինության նախարարի 2001 թվականի հոկտեմբերի 1-ի «Նորմատիվատեխնիկական ակտերի կանոնակարգման մասին» N 82 հրամանի համաձայն ՀՀ-ում գործող «ՀՀՇՆ II-8.03-96 Արհեստական և բնական լուսավորում» շինարարական նորմերի պահանջներին: Կաթսայական տեղակայանքներում, բացի բանվորական լուսավորությունից, պետք է նախատեսել նաև վթարային լուսավորություն:

Վթարային լուսավորություն պարտադիր պետք է ունենան հետևյալ տեղամասերը՝

1) կաթսաների ճակատը, ինչպես նաև կաթսաների միջև, դրանց հետևում և վերևում անցուղիները.

2) կառավարման վահանները.

3) ջրացույց և չափիչ սարքերը.

4) օդափոխողների հարթակները.

5) բաքերի և գազագրկիչների սենքերը.

6) ջրամշակման սարքավորումները.

7) կաթսաների հարթակները և աստիճանները.

8) պոմպերի սենքերը:

2.0 ՄՎտ-ից պակաս ամբողջությամբ ավտոմատացված կաթսայատներում մնայուն վթարային լուսավորությունը կարելի է փոխարինել մշտապես աշխատունակ վիճակում պահվող տանովի էլեկտրական մարտկոցային լուսատուներով:

66. Լուսավորման էլեկտրասնուցումը պետք է համապատասխանի սույն ՏԿ-ի 9-րդ գլխի պահանջներին:

67. Կաթսայական տեղակայանքի սենքերում ընդհանուր լուսավորության ջահերի՝ հատակից կամ հարթակներից 2,5 մ-ից փոքր բարձրության վրա տեղակայման դեպքում պետք է տեղադրվեն ջահեր, որոնց կառուցվածքը բացառում է հասանելիությունը լամպերին առանց գործիքների կիրառման (պտուտակահան, տափաշուրթեր կամ հատուկ դարձակ և այլն): Ջահի սնման էլեկտրական հաղորդալարերը պետք է լինեն մետաղական խողովակների, մետաղական ձկափողերի մեջ կամ ունենան պաշտպանական թաղանթներ: Առանց դրանց թույլատրվում է ջահերի սնուցման համար օգտագործել 42 Վ-ից ոչ բարձր լարումով շիկացման լամպերով ջահեր: Տեղային ստացիոնար լուսավորության շիկացման լամպերով ջահերի սնման համար պետք է կիրառվի 42 Վ-ը չգերազանցող լարում: Կաթսաներում և գազանցքերում աշխատանքի ժամանակ պետք է օգտագործվեն 12 Վ-ից ոչ բարձր լարումով ձեռքի ջահեր:

68. Շենքերի մեջ ներկառուցված գազային վառելիքով աշխատող կաթսայական տեղակայանքներում բացի հիմնական էլեկտրասնուցումից բնականոն կատարումով, պետք է լինի

պայթյունաանվտանգ իրականացումով, առանձին էլեկտրալարերով, անջատիչը և ապահովիչը կաթսայի սենքից դուրս տեղադրումով՝ էլեկտրալուսավորություն: Այս լուսավորությունը կիրառվում է գազիֆիկացված կաթսայական տեղակայանքների թողարկման աշխատանքների դեպքում: Եթե կաթսայական տեղակայանքում տեղակայված է մեթանի խտության վերահսկման համակարգ, որը գործում է գազի մուտքի դադարեցման վրա, ապա նշված լուսավորությունը պարտադիր չէ:

69. Կաթսայի որմնապատվածքի հարթակներից կամ վերին մասերից հեռավորությունը, որոնցից հաճախակի սպասարկվում են արմատուրները, լրակազմերը, հսկիչ և չափիչ գործիքները, մինչև կաթսայական տեղակայանքի սենքի ելուստային կառույցների ծածկերի (պատվածքի) ներքևի մասը պետք է լինի ոչ պակաս, քան 2 մ: Սպասարկման հարթակների և հաղորդակցողիների՝ դրանց տակով անցուղիների հեռավորությունը հատակից մինչև հարթակների ներքևի մասը պետք է լինի 2 մ-ից ոչ պակաս:

70. Եթե կաթսան չի սպասարկվում որմնապատվածքի վերին մասից և չկա կաթսայի վերևի մասով անցման անհրաժեշտություն, ապա հեռավորությունը որմնապատվածքի վերևի մասից մինչև վրածածկի (ծածկի) ելուստային կառուցվածքների ներքևի մասը պետք է լինի 0.7 մ-ից ոչ պակաս: Կաթսայի ճակատի կամ հնոցի ելուստային մասի հեռավորությունը կաթսայի հանդիպակաց պատից պետք է կազմի 3 մ-ից ոչ պակաս: Հեղուկ և գազային վառելիքով աշխատող կաթսաների համար այդ հեռավորությունը կարող է փոքրացվել մինչև 2 մ: Ընդ որում գազային այրիչներով և հեղուկ վառելանյութի այրիչներով կաթսաների համար այրիչների ելուստային մասերի հեռավորությունը դիմացի պատերից պետք է լինի 1 մ-ից ոչ պակաս, եթե կաթսայի տեղակայման հրահանգով ավելի մեծ հեռավորություն չի սահմանված: Հեղուկ կամ գազային վառելիքով աշխատող կաթսաների համար կաթսայի ճակատների միջև հեռավորությունը պետք է լինի 4 մ-ից ոչ պակաս, իսկ այրիչների միջև հեռավորությունը՝ 2 մ-ից ոչ պակաս:

71. Կաթսաների ճակատի առաջ թույլատրվում է տեղադրել պոմպեր, օդամուղներ: Ընդ որում ճակատի երկայնքով ազատ անցուղիների լայնությունը պետք է լինի 1.5 մ-ից ոչ պակաս, իսկ տեղակայված սարքավորումները չպետք է խանգարեն հնոցների և կաթսաների սպասարկմանը:

72. Կաթսաների միջև, կաթսաների և սենքի պատերի միջև անցուղիների լայնությունը պետք է լինի 1 մ-ից ոչ պակաս, կաթսաների առանձին ելուստային մասերի միջև լայնությունը, ինչպես նաև այդ մասերի և շենքի ելուստային մասերի, աստիճանների, աշխատանքային հարթակների և կառույցների այլ ելուստային մասերի միջև պետք է լինի 0.7 մ-ից ոչ պակաս, եթե կաթսայի տեղակայման հրահանգով ավելի մեծ հեռավորություն չի սահմանված: Կողային սպասարկում պահանջող կաթսաների տեղակայման ժամանակ կաթսաների միջև կամ կաթսայի և սենքի պատերի միջև անցուղիների լայնությունը պետք է լինի 1.5 մ-ից ոչ պակաս:

73. Կաթսաների կողային սպասարկման անհրաժեշտության բացակայության դեպքում կաթսաների միջև կամ կողային կաթսայի և սենքի պատի միջև գոնե մեկ անցուղու ստեղծումը պարտադիր է: Այդ անցուղիների լայնությունը, ինչպես նաև կաթսայի և սենքի հետևի պատի միջև լայնությունը, պետք է կազմի 1 մ-ից ոչ պակաս: Պատերի կամ սյուների մոտակայքում տեղակայման դեպքում կաթսայի որմնապատվածքը չպետք է հպվի անմիջականորեն սենքի պատին, այլ պետք է հեռու լինի 70 մմ-ով:

74. Արգելվում է կաթսայի սպասարկման և նորոգման հետ առնչություն չունեցող մեքենաները և սարքերը պահել դրանց հետ մեկ սենքում:

75. Կաթսայի, դրա արմատուրի և լրակազմի հարմար և անվտանգ սպասարկման համար պետք է տեղադրվեն հրակայուն նյութերից, մետաղական ճաղերով մշտական աստիճաններ և հարթակներ:

76. Մետաղական հարթակները և սանդուղքների աստիճանները՝

1) կարող են պատրաստված լինել.

ա. ակոսավոր թերթավոր պողպատից կամ ոչ հարթ մակերեսով թիթեղներից, որոնք ստացվել են ձուլակցմամբ կամ այլ ձևով,

բ. բջջային կամ շերտավոր պողպատից (կողի վրա), որոնց բջիջների չափը չի գերազանցում 12 սմ՝

գ. ճեղքավոր-ձգումնային թիթեղներից,

2) արգելվում է կիրառել հարթ հարթակներ և աստիճաններ, ինչպես նաև պատրաստել դրանք ձողաձև կլոր պողպատից.

3) 1.5 մ և ավելի բարձրությամբ աստիճանները, որոնք նախատեսված են սարքավորման կանոնավոր սպասարկման համար, պետք է ունենան հորիզոնի նկատմամբ 50 աստիճանը չգերազանցող թեքություն.

4) աստիճանների չափերը պետք է լինեն՝ ըստ լայնության 600 մմ-ից ոչ պակաս, ըստ աստիճանների բարձրության՝ ոչ ավելի քան 200 մմ, և ըստ աստիճանների լայնության՝ ոչ պակաս, քան 80 մմ: Աստիճանները պետք է ունենան հարթակներ ըստ բարձրության՝ յուրաքանչյուր 3-4 մ-ի վրա.

5) արմատուրը, չափիչ-հսկիչ և կարգավորող սարքերը սպասարկելու համար նախատեսված հարթակների լայնությունը պետք է լինի 800 մմ-ից ոչ պակաս, իսկ մնացած հարթակներինը՝ 600 մմ-ից ոչ պակաս.

6) ջրի մակարդակը ցույց տվող սարքերի սպասարկման հարթակների ուղղաձիգ ուղղությամբ հեռավորությունը մինչև ջրի մակարդակը ցույց տվող վահանակի մեջտեղը պետք է լինի 1 մ-ից ոչ պակաս և 1.5 մ-ից ոչ ավելի.

7) կաթսաների հարթակները և որմնապատվածքի վերևի մասը, որոնցից կատարվում է սպասարկումը, պետք է ունենան 0.9 մ-ից ոչ պակաս բարձրությամբ մետաղական ճաղեր, ներքևից 100 մմ ոչ պակաս բարձրությամբ երեսպատումով:

77. Կաթսայական տեղակայանքի սենքի հատակը անհրաժեշտ է իրականացնել չհրկիզվող նյութերից անհարթ և ոչ սայթաքուն մակերեսով, դրանք պետք է լինեն հարթ և ունենան ջրի՝ դեպի կոյուղի հեռացման սարքվածքներ:

78. Կաթսայական տեղակայանքի սենքի անցուղիները պետք է փակվեն մաքուր հատակի մակարդակ ունեցող հանովի սալիկներով: Անցուղիների մետաղական ծածկերը պետք է պատրաստված լինեն ակոսավոր պողպատից:

79. Գետնախորշերը և խորացումները, որոնք չեն փակվում, պետք է ցանկապատվեն 0.9 մ-ից ոչ պակաս բարձրությամբ ճաղերով:

80. Հեղուկ վառելիքի ծախսի բաքերը պետք է տեղադրվեն կաթսայական տեղակայանքի սենքից դուրս: Առանձին սենքերում (սակայն ոչ կաթսաների կամ էլ էկոնոմայզերների վերևում) թույլատրվում է դնել հեղուկ վառելիքի ծախսի փակ բաքեր, որոնց տարողունակությունն է ոչ ավելի 1 խոր. մ՝ թեթև հեղուկ վառելիքի համար:

81. Կաթսայական տեղակայանքի սենքը պետք է կահավորված լինի հրդեհամարման միջոցներով՝ հակահրդեհային սարքավորման և գույքի նորմերին համապատասխան, համաձայն ՀՀ կառավարությանն առընթեր արտակարգ իրավիճակների վարչության պետի 2003 թվականի մայիսի 27-ի «Հրդեհային անվտանգության կանոնները հաստատելու մասին» N 524-Ն հրամանի պահանջների:

82. Կաթսաների տեղակայման սենքերը, ինչպես նաև բոլոր օժանդակ և կենցաղային սենքերը

կահավորվում են բնական և արհեստական օդափոխությանը, իսկ անհրաժեշտության դեպքում՝ ջեռուցմամբ: Մշտական սպասարկումով կաթսայական տեղակայանքներում հերթապահ անձնակազմի համար նախատեսված սենքում օդի ջերմաստիճանը և մաքրությունը, թրթռումների և աղմուկի մակարդակը պետք է համապատասխանեն սանիտարահիգիենիկ նորմերին: Կաթսայական տեղակայանքի սենքի օդափոխությունը պետք է ապահովի վնասակար գազերի, փոշու հեռացումը, ներանցման օդի մատուցումը և հետևյալ ջերմաստիճանային պայմանների պահպանումը. 12 °C աստիճանից ոչ ցածր ձմռանը՝ սպասարկող անձնակազմի մշտական մնալու գոտում, 18 °C՝ վահանների տեղակայման գոտում, 15 °C՝ պոմպակայաններում, 5 °C՝ առանց մշտական սպասարկման սենքերում:

83. Կաթսայատան ներսում ջերմաստիճանի ավտոմատ կարգավորման համակարգերը պետք է ապահովեն սույն ՏԿ-ի 106-րդ կետում բերված ջերմային ռեժիմը:

8. ԿԱԹՍԱՆԵՐԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԷՍԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ

84. Կաթսայի կառավարման համակարգը պետք է կազմավորված լինի այնպես, որ. կառավարման կոճակների սխալ կամ ոչ ճիշտ հաջորդականությամբ գործադրումը անբարենպաստ չազդի համակարգի անվտանգության վրա, ոչ մի առանձին մասի հրաժարում չպետք է բերի գազի անվտանգության պաշտպանական համակարգի գործմանը կամ հանգեցնի վտանգավոր իրավիճակի:

85. Հիմնական այրիչի և բռնկման այրիչի գազի ճնշումը պետք է լինի հաստատուն, կարգավորվի կարգավորիչ սարքի միջոցով, և պետք է լինի առնվազն մեկ անվտանգ անջատման փական՝ հոսքի ուղղությանը հակառակ դիրքում:

86. Անվտանգ անջատման փականները և նրանց բանեցնող պնևմատիկ կամ հիդրավլիկ սարքերի էլեկտրական հաղորդակները պետք է համապատասխանեն հետևյալ հիմնական պայմաններին. հուսալի գործեն գազի աշխատանքային ճնշումների ամբողջ միջակայքում, շրջակա միջավայրի 0 °C-ից մինչև 60 °C ջերմաստիճանների դեպքում, էլեկտրական լարման անվանական մեծության 85 % -ից մինչև 110 % -ի դեպքերում, փականները և դրանց հիդրավլիկ կամ պնևմատիկ բանեցնող մեխանիզմները պետք է ավտոմատ փակվեն, երբ լարումը կամ հոսանքը նվազում է մինչև դրանց նվազագույն անվանական արժեքի 15% -ի չափով: Անվտանգ անջատման փականները պետք է տեղակայվեն արտադրող կազմակերպության կողմից սահմանված դիրքով:

87. Կաթսայի կառավարման համակարգը պետք է ապահովի՝

1) սպառման համակարգ մատուցվող ջրի կամ շոգու ջերմաստիճանի կառավարում՝ սահմանված (կարգավորվող) տիրույթում.

2) գերտաքացման կառավարման սարք, որը գործում է ջերմակրի գերտաքացման դեպքում՝ կապված ջրի (շոգու) շրջանառության դադարեցման կամ ջերմաստիճանի կառավարման սարքերի հրաժարման դեպքերում.

3) կաթսա մտնող հետադարձ ջրի ջերմաստիճանի կարգավորում, եթե դա նախատեսված է արտադրող կազմակերպության հրահանգով:

88. Կաթսայական տեղակայանքի համար պետք է նախատեսել գազի ճնշման կարգավորիչ, իսկ հեղուկ վառելիքի դեպքում՝ դրա ճնշման և ջերմաստիճանի կարգավորիչ: Հեռակառավարում ունեցող ավտոմատացված կաթսաների կրկնակի թողարկումը պաշտպանության սարքերից անջատվելուց հետո պետք է նախատեսվի միայն ձեռքով՝ անջատման պատճառի հայտնաբերումից և

վերացումից հետո:

89. Կաթսայի աշխատանքային հարաչափերի գործիքային հսկման (գրանցման) համակարգը պետք է ապահովի կաթսայի աշխատանքը բնորոշող հարաչափերի գրանցումը շահագործող կազմակերպության կողմից վարվող շահագործման մատյանում, որոնց արժեքների անթույլատրելի շեղումները կարող են բերել կաթսայի սարքավորումների վթարային վիճակի: Լրիվ ավտոմատացված կաթսայի անվտանգ աշխատանքը բնորոշող սարքերի տվյալները հեռահաղորդման համակարգով պետք է հաղորդվեն ընդունման կետ: Գործիքային հսկման (գրանցման) համակարգով հսկվող մեծությունների անվանացանկը սահմանվում է ՄՄՊ 4.02-103-99 «Ջերմամատակարարման ավտոնոմ աղբյուրների նախագծում» շինարարական նորմերի համաձայն:

90. Կաթսայի անվտանգության ապահովման համակարգը պետք է ապահովի հետևյալ հարաչափերի հսկումը և դրանց վտանգավոր արժեքների դեպքում կաթսայի աշխատանքի դադարեցումը՝ վառելիքի մատակարարման ընդհատմամբ՝

1) գազային կամ հեղուկ վառելիքով աշխատող շոգու կաթսաների համար.

ա. այրիչներից առաջ գազի ճնշման անթույլատրելի մեծացումը կամ նվազումը,

բ. հեղուկ վառելիքի ճնշման նվազումը այրիչներից առաջ, բացի ռոտացիոն այրիչներով կաթսաներից,

գ. հնոցում նոսրացման նվազումը՝ հավասարակշռված քարշով հնոցի դեպքում,

դ. օդի ճնշման նվազումը այրիչներից առաջ այն կաթսաների համար, որոնք սարքավորված են օդի ստիպողական մատակարարմամբ այրիչներով,

ե. այրիչների ջահի մարումը, որոնց անջատումը կաթսայի աշխատանքի դեպքում չի թույլատրվում,

զ. շոգու ճնշման բարձրացումը,

է. պաշտպանության շղթաների անսարքություններ, այդ թվում՝ լարման բացակայությունը.

2) գազային կամ հեղուկ վառելիքով աշխատող ջրատաքացուցիչ կաթսաների համար.

ա. այրիչներից առաջ գազի ճնշման մեծացումը կամ նվազումը,

բ. հեղուկ վառելիքի ճնշման նվազումը այրիչներից առաջ, բացի ռոտացիոն այրիչներով կաթսաներից,

գ. օդի ճնշման նվազումը այրիչներից առաջ այն կաթսաների համար, որոնք սարքավորված են օդի ստիպողական մատակարարմամբ այրիչներով,

դ. հնոցում նոսրացման նվազումը,

ե. այրիչների ջահի մարումը, որոնց անջատումը կաթսայի աշխատանքի դեպքում չի թույլատրվում,

զ. կաթսայի ելքում ջրի ջերմաստիճանի բարձրացումը,

է. կաթսայի ելքում ջրի ճնշման բարձրացումը,

թ. պաշտպանության շղթաների անսարքություններ, այդ թվում՝ լարման անջատվելը:

Կաթսաների աշխատանքային հարաչափերի վտանգավոր արժեքները սահմանվում են կաթսան արտադրող կազմակերպության կողմից:

91. Կաթսայական տեղակայանքը, որի կաթսան (կաթսաները) աշխատում է (են) գազով, պետք է ունենա կաթսայատան սենքի միջավայրում գազի խտության վերահսկման համակարգ, որը պետք է դադարեցնի գազի մուտքը կաթսայական տեղակայանք՝ ՀՀ կառավարության 2007 թվականի փետրվարի 22-ի «Գազասպառման համակարգի շահագործման անվտանգության մակարդակի

բարձրացման և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներում լրացումներ կատարելու մասին» N 314-Ն որոշման պահանջներին համապատասխան: Գազի մուտքային ավտոմատ ընդհանուր փականը, որի փակմամբ դադարեցվում է գազի մուտքը սենք, պետք է տեղակայվի կաթսայական տեղակայանքի սենքից դուրս: Գազի մուտքային գծի վրա՝ սենքից դուրս, պետք է տեղակայված լինի ձեռքով կառավարվող գազի վթարային փական:

9. ԷԼԵԿՏՐԱՍՏԱԿԱՐԱՐՈՒՄ ԵՎ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՍԱՐՔԵՐԻՆ ԱՌԱՋԱԴՐՎՈՂ ԷԱԿԱՆ ՊԱՀԱՆՁՆԵՐ

92. Կաթսայական տեղակայանքները, ըստ էլեկտրամատակարարման հուսալիության, հանդիսանում են II կարգի սպառիչներ, համաձայն ՀՀ կառավարության 2006 թվականի դեկտեմբերի 21-ի N 1943-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրատեղակայանքների սարքվածքին ներկայացվող ընդհանուր պահանջներ» տեխնիկական կանոնակարգի:

93. Գազային վառելիքով աշխատող կաթսայատան արտաձման օդամուղների էլեկտրաշարժիչները պետք է լինեն պայթյունաանվտանգ, իսկ դրանց գործարկման սարքերը պետք է կամ լինեն նույն դասի, կամ տեղակայվեն կաթսայատան սենքից դուրս:

94. Կաթսաների և կաթսայական տեղակայանքների էլեկտրական սարքերը և սարքվածքները պետք է համապատասխանեն էլեկտրաանվտանգության ԳՕՍՍ 27570.0. և ՀՀ կառավարության 2006 թվականի դեկտեմբերի 21-ի «Էլեկտրատեղակայանքների սարքվածքին ներկայացվող ընդհանուր պահանջներ» տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N 1943-Ն որոշման պահանջներին: Կաթսայական տեղակայանքի բարձր ջերմաստիճանային միջավայրում գտնվող էլեկտրական սարքերը և գծերը պետք է կայուն լինեն այդ միջավայրում:

95. Կաթսայական տեղակայանքների էլեկտրակայանքները ցածր լարումով պետք է իրականացվի ՀՀ կառավարության 2006 թվականի դեկտեմբերի 21-ի «Էլեկտրատեղակայանքների սարքվածքին ներկայացվող ընդհանուր պահանջներ» տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N 1943-Ն որոշմամբ սահմանված ՏՆՑ-Ս (TNC-S) համակարգով, մուտքային վահանակի հողանցումով:

96. Կաթսայական տեղակայանքների բոլոր մետաղական մասերը պետք է ունենան հուսալի հողակցում աշխատանքային և նորոգման ռեժիմների ժամանակ:

III. ԿԱԹՍԱՅԱԿԱՆ ՏԵՂԱԿԱՅԱՆՔՆԵՐԻ ԱՌԱՆՁԻՆ ՀԱՆԳՈՒՅՑՆԵՐԻՆ ԱՌԱՋԱԴՐՎՈՂ ՊԱՀԱՆՁՆԵՐ

10. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՀԱՆՁՆԵՐ

97. Կաթսաների աշխատանքի կառավարման և անվտանգ շահագործման ռեժիմների ապահովման համար դրանք պետք է հազեցված լինեն՝

- 1) ճնշման բարձրացումից ապահովող սարքերով.
- 2) ջրի մակարդակը ցույց տվող սարքերով.
- 3) մանոմետրերով.
- 4) միջավայրի ջերմաստիճանը չափող սարքերով.
- 5) փակման և կարգավորող արմատներով.
- 6) անվտանգության սարքերով:

11. ԱՊԱՀՈՎԻՉ ՍԱՐՔԵՐ

98. Կաթսայի յուրաքանչյուր տարր, որի ներքին ծավալը սահմանափակվում է փակման սարքերով, պետք է պաշտպանված լինի ապահովիչ սարքվածքներով, որոնք ավտոմատ կերպով կանխում են ճնշման բարձրացումը թույլատրելից ավելի բարձր՝ դեպի մթնոլորտ աշխատանքային միջավայրի բացթողման միջոցով:

99. Որպես ապահովիչ սարքվածք՝ թույլատրվում է կիրառել՝

- 1) ուղղակի ազդեցության լծակաբեռնային ապահովիչ սարքվածքներ.
- 2) ուղղակի ազդեցության զսպանակավոր ապահովիչ սարքվածքներ:

100. Ապահովիչ փականները տեղակայում են խողովակառուստերի վրա, որոնք անմիջականորեն միացած են կաթսային կամ խողովակաշարին՝ առանց միջանկյալ փականային մարմինների: Մեկ խողովակառուստի վրա մի քանի ապահովիչ փականներ դրվելու դեպքում խողովակառուստի ընդլայնական կտրվածքի մակերեսը պետք է գերազանցի այդ խողովակառուստի վրա տեղադրված փականների կտրվածքի գումարային մակերեսը 1,25 անգամից ոչ պակաս: Արգելվում է խողովակառուստի միջով աշխատող մարմնի առումը, որի վրա տեղադրված են ապահովիչ փականներ:

101. Ապահովիչ փականների կառուցվածքը պետք է նախատեսի աշխատանքային վիճակում դրանց գործողության հնարավորությունը փականների հարկադրական բացվելու միջոցով: Լծակավոր ապահովիչ փականների բեռները պետք է լծակի վրա ամրացվեն այնպես, որ բացավի դրանց կամայական տեղաշարժը: Փականի կարգաբերումից հետո նոր բեռներ կախելն արգելվում է: Եթե կաթսայի վրա տեղադրված է երկու ապահովիչ փական, ապա դրանցից մեկը պետք է լինի հսկիչ: Հսկիչ փականն ապահովում են սարքվածքով (օրինակ՝ կողպեքով փակվող պատյանով), որը թույլ չի տալիս սպասարկող անձնակազմին վերակարգաբերել փականը, սակայն չի խանգարում դրա վիճակի ստուգմանը:

102. Ապահովիչ փականները պետք է ունենան սարքվածքներ (հեռացման խողովակներ) փականների աշխատելու դեպքում սպասարկող անձնակազմին այրվածքներից պաշտպանելու համար: Ապահովիչ փականներից դուրս եկող արգասիքները հեռացվում են սենքի սահմաններից դուրս: Արտահանման խողովակազծերը պետք է պաշտպանված լինեն սառչելուց և հազեցած լինեն կոնդենսատի դատարկման սարքվածքներով, ընդ որում ինչպես հեռացման խողովակաշարերի վրա, այնպես էլ դատարկման սարքվածքների վրա չպետք է լինեն փակման սարքեր:

103. Թմբուկավոր ջրատաքացուցիչ կաթսաները, ինչպես նաև 0.4 ՄՎտ (0.35 Գկալ/ժ) արտադրողականությամբ առանց թմբուկի կաթսաները սարքավորվում են առնվազն երկու ապահովիչ փականով՝ յուրաքանչյուրը առնվազն 40 մմ նվազագույն տրամագծով: Բոլոր տեղակայվող փականների տրամագծերը պետք է միատեսակ լինեն: Առանց թմբուկների 0.4 ՄՎտ (0,35 Գկալ/ժ) և ավելի փոքր արտադրողականությամբ ջրատաքացուցիչ կաթսաները կարող են կահավորված լինել միայն մեկ ապահովիչ փականով: Փականների թիվը և տրամագիծը որոշվում է հաշվարկով:

104. Ցանկացած կաթսաների վրա (այդ թվում՝ մեկ ապահովիչ փական ունեցող) մեկ ապահովիչ փականի փոխարեն թույլ է տրվում տեղադրել հետադարձ փականով շրջանցում, որը բաց է թողնում ջուրը կաթսայից՝ շրջանցելով փականային սարքվածքը տաք ջրի էլքի մոտ: Այդ դեպքում կաթսայի և ընդարձակիչ անոթի միջև չպետք է լինի այլ փականային արմատուր, բացի նշված հետադարձ փականից:

105. Ընդարձակման անոթը միացնող կամ մթնոլորտային խողովակաշարի տրամագիծը պետք է

լինի 50 մմ-ից ոչ պակաս: Ջրի սառչելը կանխելու համար անոթը և խողովակաշարը պետք է ջերմամեկուսացնել, ընդարձակման անոթը պետք է ամուր փակել կափարիչով:

106. Կաթսաների, ջեռուցման համակարգը առանց ընդարձակման անոթի միացման դեպքում, վրայի ապահովիչ փականները փոխարինել արտուղումներով չի թույլատրվում:

107. Ջրատաքացուցիչ կաթսաների մոտ, որոնք աշխատում են տաք ջրամատակարարման համակարգում, ապահովիչ փականների փոխարեն թույլ է տրվում առանձին հիդրավիկական ապահովիչ փականի տեղակայում, որը կմիացնի կաթսաների վերին մասը ջրի բաքի վերին մասի հետ: Այդ արտահեղ խողովակի վրա չպետք է լինեն փականային տեղակայանքներ, իսկ բաքը պետք է միացնել մթնոլորտի հետ: Արտահեղ խողովակի տրամագիծը պետք է լինի 50 մմ-ից ոչ պակաս:

108. Կաթսայական տեղակայանքում մի քանի սեկցիոն կամ էլ խողովակավոր ջրատաքացուցիչ առանց թմբուկի կաթսաների առկայության դեպքում, որոնք աշխատում են տաք ջրի ընդհանուր խողովակաշարի վրա (եթե բացի կաթսաների վրա փականային սարքվածքներից նման սարքվածքներ կան նաև ընդհանուր խողովակաշարի վրա), թույլատրվում է յուրաքանչյուր կաթսայի վրա ապահովիչ փականների փոխարեն տեղադրել հետադարձ փականով կաթսաների փականային սարքվածքներ, իսկ տաք ջրի ընդհանուր խողովակաշարի վրա (կաթսայական տեղակայանքի սահմաններում) երկու ապահովիչ փական՝ կաթսաների փականային սարքվածքների և ընդհանուր խողովակաշարի փականային սարքվածքների միջև: Յուրաքանչյուր ապահովիչ փականի տրամագիծը պետք է ընդունել մեկ ամենամեծ ջերմարտադրողականությամբ կաթսայի հաշվարկի հիման վրա, սակայն 50 մմ-ից ոչ պակաս:

109. Արտուղիների և հետադարձ փականների տրամագծերը պետք է ընդունել ըստ հաշվարկի, սակայն ոչ պակաս, քան՝

1) 40 մմ՝ մինչև 0.28 ՄՎտ (0,24 Գկալ/ժ) ջերմարտադրողականությամբ կաթսաների համար.

2) 50 մմ՝ 0.28 ՄՎտ (0,24 Գկալ/ժ) ջերմարտադրողականությունից ավելի բարձր

ջերմարտադրողականությամբ կաթսաների համար:

110. Շոգեկաթսայի վրա տեղադրվող ապահովիչ սարքվածքների գումարային թողարկային ունակությունը պետք է լինի կաթսայի անվանական ժամային ջերմարտադրողականությունից ոչ պակաս:

111. Ապահովիչ փականների թիվը և չափերը հաշվարկվում են կաթսա արտադրող կազմակերպության հրահանգով, ելնելով ջերմակրի շրջանառության ձևից (բնական, արհեստական) և արտադրողականությունից:

112. Ապահովիչ փականները պետք է պաշտպանեն կաթսաները դրանցում հաշվարկային (թույլատրված) ճնշումից 10 %-ից ավելի բարձրանալու դեպքում:

113. Ապահովիչ փականները պետք է տեղադրվեն՝

1) բնական շրջանառությամբ առանց շոգեգերտաքացուցիչների շոգեկաթսաների վրա՝ վերին թմբուկի կամ չորաշոգիանոցի վրա.

2) ջրատաքացուցիչ կաթսաներում՝ ելքի կոլեկտորներում կամ թմբուկում.

3) անջատվող էկոնոմայզերներում՝ ոչ պակաս, քան մեկ ապահովիչ սարքվածք ջրի ելքի և մուտքի վրա:

114. Ապահովիչ փականների գործելու սարքինության ստուգումը պետք է իրականացվի արտադրող կազմակերպության կողմից սահմանած կարգով և պարբերականությամբ:

115. 100 կգ/ժ-ից պակաս արտադրողականությամբ շոգու կաթսաների վրա ապահովիչ փականների փոխարեն թույլատրվում է տեղադրել արտածման ապահովիչ սարքվածք

(հիդրոփակադակ): Արտածման ապահովիչ սարքվածքը հաշվարկվում է այնպես, որ կաթսայում ճնշումը չգերազանցի ավելցուկային աշխատանքային ճնշումն ավելի քան 10 %: Կաթսայի և արտածման ապահովիչ սարքվածքի միջև և հենց իր սարքվածքի վրա փականային սարքերի տեղակայում չի թույլատրվում:

12. ՋՐԻ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՑՈՒՑԻՉՆԵՐ

116. Ջրատաքացուցիչ կաթսան պետք է ապահովված լինի ջրաստուգիչ ծորակով, որը տեղադրված պետք է լինի կաթսայի թմբուկի վերնի մասում, իսկ դրա բացակայության դեպքում՝ կաթսայից ջրի դեպի գլխավոր խողովակաշար (մինչև փականային սարքվածք) ելքի վրա:

117. Շոգեկաթսայում ջրի մակարդակի դիրքը մշտապես դիտելու համար դրա թմբուկների վրա դրվում է ոչ պակաս, քան երկու ուղղակի գործողության ջրացույց սարք:

118. 25 մ² պակաս տաքացման մակերևույթի մակերեսով թուջե և պողպատյա խողովակավոր կաթսաների համար թույլատրվում է մեկ ջրացույց սարքի տեղակայում:

Թմբուկով (շոգեհավաքիչ) թուջե կաթսաների վրա տեղադրվում են շրջանառու խողովակներ, որոնք միացնում են թմբուկի ներքնի մասը կաթսայի սեկցիաների հետ:

119. Ուղղակի գործողության ջրացույց սարքերը հավաքակցվում են ուղղաձիգ կամ 30 աստիճանից ոչ ավելի թեքությամբ դեպի առաջ: Դրանք պետք է այնպես տեղադրված և լուսավորված լինեն, որ ջրի մակարդակը լավ երևա մեքենավարի (հնոցապանի), օպերատորի աշխատանքի տեղից:

120. Ջրացույց սարքերի վրա կաթսայում ջրի թույլատրելի ներքին սահմանային մակարդակի վրա դրվում է անշարժ մետաղական ցուցանակ «Ստորին մակարդակ» մակագրությամբ: Այդ մակարդակը պետք է 25 մմ-ից ոչ պակաս բարձր լինի ջրացույց սարքի թափանցիկ թիթեղից (ապակուց): Համանման ձևով տեղադրում են նաև կաթսայում ջրի թույլատրելի վերին մակարդակի ցուցանակ, որը պետք է գտնվի ոչ պակաս, քան 25 մմ-ից ավելի ցածր թափանցիկ թիթեղի (ապակու) վերին տեսանելի եզրից:

121. Ջրացույց սարքերը կամ փորձարկման ծորակները տեղադրվում են կաթսայի թմբուկի վրա մեկը մյուսից առանձին: Թույլատրվում է երկու ջրացույց սարքերի համատեղ տեղադրում 70 մմ-ից ոչ պակաս տրամագծով միացնող խողովակի (սյունակի) վրա: Եթե ջրացույց սարքերը միացնում են կաթսային մինչև 500 մմ երկարությամբ խողովակներով, ապա այդ խողովակների ներքին տրամագիծը պետք է լինի 25 մմ-ից ոչ պակաս, իսկ 500 մմ-ից ավելի երկարության դեպքում՝ 50 մմ-ից ոչ պակաս:

Ջրացույց սարքերով կաթսաները միացնող խողովակները պետք է հասանելի լինեն ներքին մաքրման համար: Դրանց վրա կցաշուրթերի և փականային մարմինների տեղակայում չի թույլատրվում: Կաթսայի թմբուկից ջրացույց սարքերը միացնող խողովակների ուրվագիծը (կոնֆիգուրացիան) պետք է բացառի դրա վրա օդային և ջրային պարկերի ստեղծման հնարավորությունը:

122. Կաթսայի թմբուկի (իրանի) հետ ջրացույց սարքերը միացնող խողովակները պետք է պաշտպանված լինեն սառչելուց:

123. Շոգեկաթսաների ուղղակի գործողության մակարդակների ցուցանակներում կիրառում են հարթ թափանցիկ ապակիներ: Գլանաձև ապակիներով ջրացույց սարքերը կարող են օգտագործվել 0.5 տ/ժ-ից ոչ բարձր արտադրողականությամբ շոգեկաթսաների վրա:

124. Ջրացույց սարքերը պետք է ունենան արտաքին պաշտպանական սարքվածքներ, որոնք ապահովում են սպասարկող անձնակազմի անվտանգությունն ապակու խզման դեպքում:

Պաշտպանական սարքվածքները չպետք է դժվարացնեն ջրի մակարդակին հետևելը:

125. Ջրացույց սարքերը պետք է ապահովված լինեն արտափչման արմատուրով, ինչպես նաև փակման արմատուրով շոգու և ջրի տարածքը անջատելու համար, որոնք ապահովում են ապակիների և կորպուսի փոխարինումը կաթսայի աշխատանքի ընթացքում: Թույլատրվում է այդ նպատակով օգտագործել խցանային ծորակներ: Ջրացույց սարքերի արտափչման ժամանակ ջրի բացթողման նպատակով օգտվում են ազատ դատարկման համար արտուղու խողովակից և պաշտպանիչ հարմարանքով ձագարներից:

13. ՄԱՆՈՄԵՏՐԵՐ

126. Կաթսաների և սնուցման գծերի վրա տեղակայվող մանոմետրերը պետք է ունենան 2,5-ից ոչ ցածր ճշգրտության դաս:

127. Մանոմետրերն այնպիսի սանդղակով պետք է ընտրվեն, որպեսզի աշխատանքային ճնշման դեպքում դրանց սլաքը գտնվի սանդղակի միջին երրորդ մասի վրա:

128. Մանոմետրի սանդղակի վրա կարմիր գիծ են անում կաթսայում թույլատրված ճնշմանը համապատասխանող բաժանմամբ՝ հաշվի առնելով հեղուկի սյան կշռից առաջացած լրացուցիչ ճնշումը: Կարմիր գծի փոխարեն թույլատրվում է մանոմետրի իրանի վրա ամրացնել կամ գողել կարմիր ներկված մետաղական թիթեղ, որը կիպ ամրացված է մանոմետրի ապակուն՝ սանդղակի համապատասխան բաժանմունքի վրա: Ապակու վրա ներկով կարմիր գիծ գծելն արգելվում է:

129. Մանոմետրն այնպես են տեղակայում, որ դրա ցուցմունքները տեսանելի լինեն սպասարկող անձնակազմին, ընդ որում՝ մանոմետրի թվացույցը պետք է գտնվի ուղղաձիգ կամ էլ 30 աստիճան առաջ թեքումով հարթության վրա:

130. Մինչև 2 մ բարձրության վրա (հաշված սպասարկման հարթակից) տեղադրվող մանոմետրերի իրանների տրամագիծը պետք է 100 մմ-ից ոչ պակաս լինի, 2-5 մ բարձրության վրա՝ 160 մմ-ից ոչ պակաս, իսկ 5 մ բարձրության վրա՝ 250 մմ-ից ոչ պակաս:

131. Յուրաքանչյուր շոգեկաթսայի վրա պետք է տեղադրվի մանոմետր, որը հաղորդակցվում է կաթսայի շոգու տարածքի հետ միացնող սիֆոնային խողովակի միջոցով կամ այլ համանման՝ հիդրավլիկ փակադակով հարմարանքի միջոցով:

132. Հեղուկ վառելիքով աշխատող կաթսաների մոտ վառելիքը փողրակներին (այրիչներին) առբերող խողովակաշարի վրա ըստ վառելիքի ընթացքի վերջին փականային մարմնից հետո տեղակայում են մանոմետրեր:

133. Մանոմետրերը չի կարելի օգտագործել հետևյալ դեպքերում՝

- 1) մանոմետրի վրա չկա կապարակնիք կամ դրոշմ ստուգման անցկացման վերաբերյալ.
- 2) մանոմետրի ստուգման ժամկետն անցել է.
- 3) մանոմետրի սլաքը դրա անջատման դեպքում չի վերադառնում սանդղակի զրոյական ցուցմունքի վրա տվյալ մանոմետրի թույլատրելի սխալանքի կեսը գերազանցող մեծությամբ:

134. Ջրատաքացուցիչ կաթսաների վրա մանոմետրերը տեղադրում են՝

- 1) կաթսա՝ ջրի մուտքի վրա փակման մարմնից հետո.
 - 2) կաթսայից տաքացված ջրի ելքի վրա մինչև փակման մարմինը.
 - 3) շրջանառու և լրասնուցման պոմպերի ներծծող և մղման գծերի վրա:
- Յուրաքանչյուր շոգեկաթսայի համար մանոմետրը տեղադրում են կաթսայի սնուցումը կարգավորող մարմնի սնուցող գծի վրա: Կաթսայական տեղակայանքում 2 տ/ժ-ից փոքր շոգեարտադրողականությամբ մի քանի կաթսաների առկայության դեպքում թույլատրվում է

ընդհանուր սնուցող գծի վրա մեկ մանոմետրի տեղադրում: Շոգեկաթսաների և ջրատաքացուցիչ կաթսաների սնուցման գծերի վրայի մանոմետրերը պետք է հստակ երևան սպասարկող անձնակազմին:

135. Կաթսաների անմիջական մոտակայքում երկրորդ սնուցման պոմպի փոխարեն ջրմուղի ցանցի օգտագործման դեպքում այդ ջրմուղի գծի վրա պետք է տեղակայվի մանոմետր:

136. Մանոմետրի ստուգումն իր կապարակնքմամբ (դրոշմամբ) իրականացնում են 12 ամիսը մեկ անգամից ոչ քիչ: Բացի դրանից, 6 ամիսը մեկ անգամից ոչ քիչ, կազմակերպությունը պետք է իրականացնի աշխատանքային մանոմետրերի ստուգում՝ ստուգված աշխատանքային մանոմետրի միջոցով, որոնք ունեն ստուգվող մանոմետրի հետ միատեսակ թվացույց և ճշգրտության դաս: Ստուգման արդյունքները գրանցվում են վերահսկողական ստուգումների մատյանում: Մանոմետրերի աշխատանքի սարքինության ստուգումը եռաքայլ ծորակների կամ դրանց փոխարինող փականային փականների օգնությամբ պետք է իրականացվի հերթափոխի ընթացքում մեկ անգամից ոչ հազվադեպ:

137. Գազային վառելիքով աշխատող կաթսաները պետք է հազեցված լինեն հսկիչ և չափիչ սարքերով՝ ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 22-ի «Անվտանգության տեխնիկական գազի տնտեսությունում տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N 2399-Ն որոշման պահանջների համաձայն:

14. ՋԵՐՄԱՍՏԻՃԱՆԻ ՀՄԿՄԱՆ ՍԱՐՔԵՐ

138. Ջրատաքացուցիչ կաթսաներում ջրի ջերմաստիճանը չափելու համար ջերմաչափեր են տեղադրվում դեպի կաթսա ջրի մուտքի և ելքի վրա: Կաթսայից ջրի ելքի վրա ջերմաչափը պետք է տեղադրվի կաթսայի և փականային մարմնի միջև: Կաթսայատանը երկու կամ ավելի կաթսաների առկայության դեպքում բացի դրանից ջերմաչափեր են տեղադրում ընդհանուր մատակարարող և հետադարձ խողովակաշարերի վրա: Այդ դեպքում յուրաքանչյուր կաթսայի հետադարձ խողովակաշարի վրա ջերմաչափի տեղադրումը պարտադիր չէ:

139. Շոգեկաթսաների սնուցող խողովակաշարերի վրա տեղադրում են սնուցող ջրի ջերմաստիճանը չափող ջերմաչափեր:

140. Նախնական տաքացում հեղուկ վառելիքով աշխատելու դեպքում վառելիքամուղը սարքավորում է ջերմաչափով, որը չափում է վառելիքի ջերմաստիճանը փողրակներից առաջ:

15. ԱՐՄԱՏՈՒՐՆԵՐ ԵՎ ԽՈՂՈՎԱԿԱԿԾԵՐ

141. Կաթսաների և խողովակաշարերի վրա տեղադրված արմատուրը պետք է ունենա նշագրում, որում պետք է նշված լինի՝

- 1) անցման պայմանական տրամագիծը.
- 2) միջավայրի պայմանական կամ աշխատանքային ճնշումը և ջերմաստիճանը.
- 3) միջավայրի հոսքի ուղղությունը:

Արմատուրի ղեկանիվի վրա պետք է ցույց տրվի դրանց բացման և փակման պտույտի ուղղությունը:

142. Կաթսայի շոգեմուղի վրա տեղակայում են փակիչ փական կամ սողնակ: Շոգեմուղի փական մարմինները տեղադրում են կաթսային հնարավորին չափ մոտ:

143. Սնման խողովակաշարի վրա տեղադրվում են հետադարձ փական և փակման մարմին:

144. Մի քանի սնուցող պոմպերի առկայության դեպքում, որոնք ունեն ընդհանուր ներծծող և մղող խողովակաշարեր, յուրաքանչյուր պոմպի ներծծման և մղման կողմերում տեղադրում են փականան մարմիններ: Սնուցման կամ շրջանառու կենտրոնախույս պոմպերի ճնշումային կարճախողովակի վրա մինչև փականան մարմինը տեղադրվում է հետադարձ փական:

145. Սնուցման խողովակաշարը պետք է ունենա խողովակառստեր խողովակաշարի վերևի կետից օդը բաց թողնելու համար, ինչպես նաև խողովակաշարի ներքևի կետերից ջրի դատարկման գծեր:

146. Յուրաքանչյուր կաթսա սարքավորում են հետևյալ խողովակաշարերով`

1) կաթսայի արտափչման և ջրի բացթողման (արտահեղման) համար կաթսայի աշխատանքի դադարեցման դեպքում.

2) կաթսայից օդը հեռացնելու համար վառման ժամանակ.

3) շոգետարներից կոնդենսատի հեռացման համար.

4) ջրի և շոգու փորձանմուշների վերցման համար.

5) շահագործման ընթացքում ռեագենտների և լվացող նյութերի` կաթսայի քիմիական մաքրման դեպքում ներածման համար:

147. Արտափչման և դրենաժային խողովակաշարերի համակարգը պետք է ապահովի ջրի և նստվածքների հեռացման հնարավորությունը կաթսայի ստորին մասերից: Դրենաժային խողովակաշարերի պայմանական անցման տրամագիծը պետք է լինի 25 մմ-ից ոչ պակաս:

148. Յուրաքանչյուր դրենաժային խողովակաշարի վրա տեղադրում են փականան մարմին (փական, սողնակ): Փականան մարմինները մոնտաժվում են հնարավորինս կաթսային մոտ: Կաթսայի և փականան մարմնի միջև խողովակաշարի հատվածում չպետք է լինեն կցաշուրթային միացումներ, բացի նրանցից, որոնք անհրաժեշտ են այդ խողովակաշարը կաթսային կամ փականան մարմնին կապելու համար:

149. Կաթսայում կամ ջրատաքացուցիչում օդի հնարավոր կուտակման տեղերում պետք է տեղադրվեն օդի հեռացման տեղակայանքներ: Ապահովիչ փականների միջով օդի հեռացման դեպքում նման սարքվածքների առկայությունը պարտադիր չէ:

150. Շոգեմուղի այն տեղամասերում, որոնք կարող են անջատվել փականան մարմնի միջոցով, նախատեսվում են կոնդենսատի հեռացումն ապահովող դրենաժներ: Յուրաքանչյուր դրենաժային խողովակաշարի վրա պետք է դրվի փականան մարմին:

151. Ցանցային ջրի ընդհանուր խողովակաշարին միացած յուրաքանչյուր ջրատաքացուցիչ կաթսայի մատակարարման և հետադարձ խողովակաշարերի վրա մոնտաժված են մեկական փականան մարմին (փական կամ սողնակ):

152. Կաթսայի խողովակների պատերի գերտաքացման և դրանում ճնշման բարձրացումը կանխելու համար այն դեպքում, երբ կաթսայի և փականի (սողնակի) միջև ստիպողական շրջանառության համակարգում ցանցային պոմպերը պատահականորեն կանգ են առել, ջուրն անվտանգ տեղ հեռացնելու համար պետք է տեղակայվի փականան սարքվածքով խողովակաշար:

16. ՋՐԱՏԱՔԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ԱՐՄԱՏՈՒՐՆԵՐ, ՀՄԿԻՉ ԵՎ ՉԱՓԻՉ ՄԱՐՔԵՐ

153. Յուրաքանչյուր ջրատաքացուցիչ (ջերմափոխանակիչ) պետք է ապահովվի հետևյալ արմատորով`

1) առաջնային ջերմատարի կողմից (տաքացման կողմի վրա` փականան փական (սողնակ), մանոմետր և ջերմաչափ, եթե առաջնային ջերմատար է հանդիսանում ջուրը.

2) տաքացվող ջրի կողմից՝ մանոմետրով, ապահովիչ փականով, որը բացառում է ճնշման բարձրացման հնարավորությունը ծավալային տիպի ջրատաքացուցիչի տաքացվող մասում թույլատրելիից 10 %-ով ավելի բարձր և ջերմաչափով՝ տաքացված ջրի ելքի վրա:

3) սույն տեխնիկական կանոնակարգի պահանջներին ենթակա ճնշման շոգեկաթսաների, ջրատաքացուցիչ կաթսաների և կաթսայական տեղակայանքների սարքվածքներում օգտագործվող բոլոր չափիչ սարքերը ենթակա են չափագիտական հսկողության և վերահսկողության՝ համաձայն «Չափումների միասնականության ապահովման մասին» ՀՀ օրենքի:

17. ԿԱԹՍԱՅԻ ՋՐԱՅԻՆ ՌԵԺԻՍԸ

154. Կաթսաների սնման և լրասնման ջրի որակի և մշակման վերաբերյալ պահանջների կատարումը պարտադիր է կաթսան շահագործող կազմակերպության համար: Շոգեկաթսաների սնող ջրի որակը պետք է համապատասխանի աղյուսակ N 1-ում բերված ցուցանիշներին: Կաթսայական տեղակայանքի սեփականատերը պարտավոր է սահմանել պարբերական վերահսկողություն ցանցային ջրի որակի նկատմամբ՝ դրա խախտման դեպքերում ապահովելով որակի անհապաղ վերականգնման միջոցառումների իրականացումը: Ջրի մշակման արդյունավետ և տնտեսապես հիմնավորված տեխնոլոգիայի և դրա իրականացման սարքավորումների ընտրությունը՝ կախված սնուցման ջրի որակից, նախագծման և(կամ) շահագործման փուլում կարող է կատարել մասնագիտացված կազմակերպությունը, որը պետք է կազմի հրահանգ կաթսայի ջրաքիմիական ռեժիմների վարման վերաբերյալ: Ջեռուցման նպատակով օգտագործվող ջրատաքացուցիչ կաթսաների համար օգտագործվող ցանցային ու լրասնուցող ջրի որակը պետք է համապատասխանի աղյուսակ N 2-ում բերված պահանջներին: Եթե կաթսայական տեղակայանքը իրականացնում է նաև կենցաղային նպատակների համար տաք ջրամատակարարում, ապա առաքման կետում ջրի որակը պետք է համապատասխանի ՀՀ առողջապահության նախարարի 2002 թվականի դեկտեմբերի 25-ի N 876 հրամանի պահանջներին (գրանցում N 10002340):

Աղյուսակ N 1

ՇՈԳԵԿԱԹՍԱՆԵՐԻ ՄՆՈՂ ՋՐԻ ՈՐԱԿԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Ցուցանիշ	Աշխատանքային ճնշում ՄՊա			
	0.9	1.4	2.4	4
Թափանցիկությունը (ոչ պակաս), սմ	30	40	40	40
Ընդհանուր կոշտություն, մկգ/էկվ/կգ	30	15	10	5
Երկաթի պարունակությունը (գումարային Fe), մկգ/կգ	չի նորմավորվում	300	100	50
Լուծված թթվածնի պարունակությունը, (2 տ/ժ և ավելի գոլորշու արտադրողականությամբ կաթսաների համար) մկգ/կգ	50	30	20	20
pH արժեքը 25 °C ջրի ջերմաստիճանի ժամանակ	8.5-ից մինչև 10.5			
Նավթամթերքների պարունակությունը, մկգ/կգ	5	3	3	0.5

155. Այն կաթսաները, որոնք չունեն խնայարար և այն կաթսաները, որոնք ունեն թուջյա խնայարար, լուծված թթվածնի պարունակությունը պետք է լինի մինչև 100 մկգ/կգ՝ ցանկացած

վառելիքի այրման դեպքում:

156. Առանձին դեպքերում, մասնագիտացված կազմակերպության կողմից հիմնավորված, կարող է թH մեծության համար թույլատրվել նվազեցում մինչև թH 7,0 արժեքը:

157. Ջրատաքացուցիչ կաթսաների ցանցային և լրասնուցող ջրի որակը պետք է բավարարի աղյուսակ N 2-ում բերված պահանջներին:

158. Այն ջերմային ցանցերում, որտեղ ջրատաքացնող կաթսաները աշխատում են գուգահեռ արուրային խողովակներով ջրատաքացուցիչների հետ, ցանցային ջրի թH վերևի արժեքը չպետք է գերազանցի 9.5 ցուցանիշը:

159. Ջրային ռեժիմը պետք է ապահովի շոգե- և ջրատաքացուցիչ կաթսաների, ջերմություն օգտագործող սարքերի և խողովակների աշխատանքն առանց դրանց տարրերի վնասման` դիրտի և նստվածքների կամ էլ մետաղի կոռոզիայի հետևանքով: Շոգե- և ջրատաքացուցիչ կաթսաների տաքացման ներքին մակերեսների վրա առաջացող նստվածքների մաքրման պարբերականությունը և մաքրման տեխնոլոգիան պետք է ընտրվի համաձայն արտադրող կազմակերպության շահագործման հրահանգների:

Աղյուսակ N 2

ՋՐԱՏԱՔԱՑՈՒՑԻՉ ԿԱԹՍԱՆԵՐԻ ՑԱՆՑԱՅԻՆ ԵՎ ԼՐԱՍՆՈՒՑՈՂ ՋՐԻ ՈՐԱԿԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Ցուցանիշ	Ջերմամատակարարման համակարգ			
	բաց		փակ	
	Ցանցային ջրի ջերմաստիճանը, °C			
	115	150	115	150
Թափանցիկությունը (ոչ պակաս), սմ	40	40	30	30
Կարբոնատային կոշտությունը` մկգ/էկվ/կգ pH-ի հետևյալ արժեքի դեպքում`	800	750	800	750
1. ոչ ավելի 8.5	չի թույլատրվում			
2. 8.5 ավելի				
Երկաթի պարունակությունը (գումարային Fe), մկգ/կգ	300	300	600	500
Լուծված թթվածնի պարունակությունը, մկգ/կգ	50	30	50	30
pH-ի արժեքը 25 °C ջրի ջերմաստիճանի ժամանակ	7.0-ից մինչև 8.5		7.0-ից մինչև 11.0	
Նավթամթերքների պարունակությունը, մկգ/կգ	1.0			

160. Անհրաժեշտ է վարել մատյան (ամփոփագիր) ջրամշակման ջրի վերլուծության արդյունքների գրանցման համար, ջրամշակման սարքավորման սպասարկման գործողությունների և կաթսաների արտափչման վերաբերյալ: Կաթսայի յուրաքանչյուր կանգառի դեպքում դրա տարրերի ներքին մակերևույթների մաքրման համար ջրամշակման մատյանի մեջ պետք է նշվեն դիրտի և խարամի տեսակն ու հաստությունը:

161. Թարմ ջրի ռեզերվային գծերի վրա, որոնք միացած են փափկեցված ջրի կամ կոնդենսատի

գծերին, ինչպես նաև սնող բաքերին, տեղադրվում են երկու փակման մարմին, իսկ դրանց միջև՝ հսկող ծորակ: Փակման մարմինները պետք է գտնվեն փակ վիճակում և կապարակնքվեն, հսկիչ ծորակը բաց պետք է լինի: Կաթսայի՝ հում ջրով սնման յուրաքանչյուր դեպքի մասին ջրամշակման մատյանի մեջ գրանցում են կատարում:

162. Ջերմամատակարարման բաց համակարգերի լրասնուցման ջուրը պետք է համապատասխանի ՀՀ առողջապահության նախարարի 2002 թվականի դեկտեմբերի 25-ի N 876 հրամանի պահանջներին (գրանցում N 10002340) պահանջներին, եթե նախատեսված չեն այլ նորմեր կաթսայի արտադրող կազմակերպության փաստաթղթերով:

18. ՄՆՄԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ

163. Կաթսաները ջրով սնուցելու համար թույլատրվում է կիրառել՝

- 1) կենտրոնախույս և մխոցային պոմպեր՝ էլեկտրական շարժաբեքով.
- 2) կենտրոնախույս և մխոցային պոմպեր՝ շոգեշարժաբեքով.
- 3) ձեռքի շարժաբեքով պոմպեր.
- 4) ջրմուղ ցանց:

Պոմպերից մեկի փոխարեն ջրմուղի կիրառումը թույլ է տրվում, եթե ջրի ճնշումը ջրմուղում անմիջականորեն կաթսայի մոտ գերազանցում է աշխատանքային ճնշումը ոչ պակաս, քան 0.1 ՄՊա-ով ($1 կգ/սմ^2$): Այդ դեպքում ջրմուղում կաթսաներին անմիջական մոտ պետք է տեղադրվեն փակման փական, հետադարձ փական և մանոմետր:

164. Յուրաքանչյուր սնող պոմպի վրա պետք է ամրացվի ցուցատախտակ, որի վրա պետք է ցույց տրվեն հետևյալ տվյալները՝

- 1) համարանիշն ըստ կաթսայատան սխեմայի.
- 2) անվանական արտադրողականությունը ջրի անվանական ջերմաստիճանի դեպքում.
- 3) առավելագույն էջքը՝ անվանական արտադրողականության դեպքում.
- 4) պտուտաթվերի մեծությունը.
- 5) պոմպից առաջ ջրի անվանական ջերմաստիճանը:

165. Ցանցային պոմպերի քանակը և արտադրողականությունը պետք է նախագծային կազմակերպության կողմից ընտրվի ջեռուցման համակարգի բնականոն աշխատանքն ապահովելու պայմանով:

166. Ստիպողական շրջանառությամբ ջեռուցման համակարգի համար աշխատող ջրատաքացուցիչ կաթսաների լրասնուցումը պետք է իրականացվի դեպի խողովակաշար ջեռուցման համակարգի ցանցային պոմպերի ներծծման տեղում, իսկ բնական շրջանառության դեպքում՝ դեպի ջեռուցման համակարգի հետադարձ խողովակաշար կաթսայի փակման սարքվածքից ոչ պակաս 3 մ հեռավորության վրա:

167. Մնուցող խողովակաշարի փակման մարմնի և ապահովիչ փական չունեցող մխոցային պոմպի միջև պետք է տեղակայվի ապահովիչ փական, եթե ստեղծվող ճնշումը գերազանցում է խողովակաշարի հաշվարկային ճնշմանը:

19. ՀՄԿԻՉ ԵՎ ՉԱՓԻՉ ՍԱՐՔԵՐ

168. Կաթսայական տեղակայանքներում չափումների միասնականության ապահովումը պետք է իրականացվի «Չափումների միասնականության ապահովման մասին» ՀՀ օրենքով սահմանված

կարգով:

169. Կաթսայական տեղակայանքներում կիրառվող հսկիչ և չափիչ սարքերը պետք է համապատասխանեն ստանդարտների պահանջներին՝ միջավայրի վնասակար գործոնների (ջերմաստիճան, թրթռումներ, խոնավություն և այլն) ազդեցության նկատմամբ: Մարքերի ճշտության դասը պետք է համապատասխանի սույն կանոնակարգի պահանջներին:

170. Կաթսայի կառավարման և անվտանգության ապահովման համակարգերում կիրառվող չափիչ սարքերը և կատարող օրգանները ենթակա են նախնական և պարբերական ստուգման (ստուգաչափման)՝ արտադրող կազմակերպության հրահանգներին համապատասխան:

20. ԳՈՐԾԱՐԿՄԱՆ ՓՈՐՁԱՐԿՈՒՄՆԵՐ ԵՎ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐ, ՏԵՂԱԿԱՅԱՆՔՆԵՐԻ ՎԿԱՅԱԳՐՈՒՄԸ

171. Կաթսաների և կաթսայական տեղակայանքների առանձին հանգույցների լրակազմ տրամադրվող սարքավորումների արտադրող կազմակերպության փորձարկման մեթոդները և փորձարկման հարաչափերը սահմանվում են արտադրող կազմակերպության հրահանգներով: Փորձարկման հարաչափերի արժեքները չպետք է փոքր լինեն սույն կանոնակարգով սահմանվածներից:

172. Հավաքակցված կաթսայական տեղակայանքները և դրանց առանձին սարքերը պետք է ենթարկվեն թողարկման ստուգումների և փորձարկումների մասնագիտացված կազմակերպության կամ առանձին սարքեր (կաթսաներ, այրիչներ և այլն) արտադրող կազմակերպությունների կողմից, որոնց ընթացքում կարգաբերվում և ստուգվում են՝

- 1) կառավարման համակարգի և սարքերի աշխատանքը աշխատանքային բոլոր ռեժիմներում.
- 2) անվտանգության ապահովման համակարգի աշխատանքը.
- 3) ջերմակրի համակարգի հիդրավլիկ կայունությունը՝ բանվորական ճնշման 1.25-պատիկ մեծությամբ փորձարկմամբ.
- 4) տեղակայված արմատուրների, շարժիչների, հսկիչ սարքերի աշխատանքը.
- 5) տեղակայանքների համապատասխանությունը նախագծին և սույն կանոնակարգին, դրանց հանգույցների վիճակը՝ արտաքին և ներքին զննմամբ: Կաթսայական տեղակայանքները համարվում են փորձարկումները հաջող անցած, եթե դրանց արդյունքում հավաստվում է ամբողջ համակարգի կայուն աշխատանքը լրիվ ջերմային հզորությամբ առնվազն 72 ժամ անընդհատ:

173. Ստուգումների և փորձարկումների կազմակերպման ու անցկացման պայմանները սահմանվում են պատվիրատուի և կապալառուի միջև կնքված պայմանագրով: Կաթսաների և կաթսայական տեղակայանքների ստուգումների և փորձարկումների կատարումը կարող է վերահսկվել վերահսկողություն իրականացնող իրավասու մարմնի կողմից՝ վերջինիս կողմից սահմանված կարգով:

174. Ստուգումների և փորձարկումների մասին կազմվում է արձանագրություն, որում նշվում են ստուգման ու փորձարկման բոլոր աշխատանքների, հայտնաբերված և վերացված թերությունների (անսարքությունների) մասին: Արձանագրության տիպային ձևը սահմանում է վերահսկողություն իրականացնող իրավասու մարմինը:

175. Կաթսայատան յուրաքանչյուր կաթսայի և կաթսայական տեղակայանքի համար կազմվում է անձնագիր, որում նշվում են տեղակայանքի և նրա հանգույցների տեխնիկական տվյալները, ինչպես նաև շահագործման ընթացքում կատարված նորոգման, պարբերական ստուգման ու սպասարկման աշխատանքները: Անձնագրի տիպային ձևը սահմանում է վերահսկողություն իրականացնող

իրավասու մարմինը: Կաթսաների և տեղակայանքների սարքերի անձնագրերը և արտադրող կազմակերպության փաստաթղթերը պետք է պահվեն դրա սեփականատիրոջ մոտ՝ կաթսայի շահագործման ամբողջ ընթացքում:

176. Կաթսայական տեղակայանքի շահագործման թույլատրումը կատարվում է ընդունող հանձնաժողովի կողմից, կառավարության 08.05.2003 թվականի N 626-Ն «Ավարտված շինարարության շահագործման փաստագրման կարգը հաստատելու մասին» որոշմամբ սահմանված կարգով:

IV. ԿԱԹՍԱՅԱԿԱՆ ՏԵՂԱԿԱՅԱՆՔՆԵՐԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

21. ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՀԱՆՁՆԵՐ

177. Կաթսայական տեղակայանքները նպատակային օգտագործման ընթացքում (հավաքակցում, ապահովաքակցում, ջերմային էներգիայի արտադրություն, սեզոնային կոնսերվացում, նորոգում և այլն) չպետք է հանդիսանան անթույլատրելի ռիսկի աղբյուր՝ դրանք սպասարկող անձնակազմի և այլ անձանց կյանքի, առողջության ու գույքի համար:

178. Կաթսայական տեղակայանքների սեփականատերը անձամբ կամ մասնագիտացված կազմակերպության միջոցով պարտավոր է գնահատել կաթսայական տեղակայանքներում գոյություն ունեցող վտանգավոր և վնասակար գործոնների ազդեցության ռիսկերը, դրանց ազդեցության հավանականությունը, հետևանքների լրջությունը և դրա նվազեցման (կառավարման) իրատեսական հնարավորությունները՝ հիմք ընդունելով սույն կանոնակարգի, այլ նորմատիվ ակտերի պահանջները և սարքավորումները արտադրող կազմակերպությունների պահանջները:

179. Կաթսայական տեղակայանքների սեփականատերը պարտավոր է՝

1) ապահովել և պահպանել աշխատանքի անվտանգ պայմաններ՝ համաձայն գործող նորմատիվ ակտերի և ստանդարտների.

2) ապահովել աշխատողների առողջության պահպանումը և անվտանգությունը.

3) ապահովել տեղակայանքների անվտանգության համակարգերի հուսալի աշխատանքը.

4) ապահովել կաթսաների աշխատանքի այնպիսի ռեժիմների վարումը, որոնց դեպքում վնասակար նյութերի արտանետումները միջավայր (մթնոլորտ, հող, ջուր) չեն գերազանցում սահմանված թույլատրելի նորմերը.

5) ապահովել անձնակազմի ուսուցումը, պարբերական հրահանգավորումը և գիտելիքների ստուգումը.

6) համագործակցելով իրավասու մարմինների հետ՝ սահմանված կարգով կատարել վթարների ու դժբախտ դեպքերի վերլուծություն.

7) անձամբ կամ մասնագիտացված կազմակերպության միջոցով ապահովել տեղակայանքների պարբերական սպասարկումը, նորոգումը և ստուգումը, որոնց կատարմամբ ապահովվում է տեղակայանքների անվտանգ աշխատանքը.

8) ապահովել անձնակազմը անհրաժեշտ պաշտպանական միջոցներով և սպասարկման համար անհրաժեշտ արտահագուստով ու գործիքներով.

9) ապահովել անվտանգության ապահովման համար անհրաժեշտ հրահանգների և այլ փաստաթղթերի կազմումը և տրամադրումը անձնակազմին.

10) կազմակերպության ներքին ակտով նշանակել տեղակայանքների անվտանգ շահագործումը և

աշխատանքը ապահովող պատասխանատու անձ (եթե տեղակայանքների սպասարկումը պայմանագրով չի պատվիրակվում մասնագիտացված կազմակերպությանը)՝ սահմանելով նրա պարտականությունները, լիազորությունները և պատասխանատվությունը՝ հիմք ընդունելով սույն ՏԿ-ի պահանջները.

11) մշակել և ներդնել այլ միջոցառումներ, որոնք իր գնահատմամբ անհրաժեշտ են անվտանգության ապահովման համար:

180. Յուրաքանչյուր կաթսայական տեղակայանքի սեփականատեր, տեղակայանքի անվտանգության ապահովման համար մինչև դրա շահագործումը սկսելը պետք է՝

1) ունենա որակավորված անձնակազմ, որը ուսուցանված է գազի սարքերի, ճնշման տակ գտնվող անոթների անվտանգ շահագործման և տվյալ կաթսայական տեղակայանքի շահագործման կանոններին, կամ ունի կաթսայատան շահագործման մշտական գործող պայմանագիր մասնագիտացված կազմակերպության հետ.

2) անձամբ կամ մասնագիտացված կազմակերպության միջոցով գնահատի աշխատավայրում առկա ռիսկերը, կազմի կաթսայատան շահագործման, սպասարկման և վթարային իրավիճակներում անձնակազմի գործողությունների հրահանգ, որի պահանջների կատարմամբ նվազագույնի է հասցվում մարդկանց (այդ թվում՝ անձնակազմի) կյանքին ու առողջությանը վնաս հասցնելու ռիսկը:

181. Անձնակազմի գործողությունների հրահանգը պետք է սահմանի անվտանգության ապահովման պայմանները և անձնակազմի գործողությունները կաթսայական տեղակայանքների աշխատանքի հետևյալ շեղումների դեպքերում՝

1) կաթսայի կառավարման համակարգի հրաժարումներ կամ սխալ գործողություններ.

2) հրդեհներ, պայթյուններ.

3) վառելիքի, ջրի կամ էլեկտրաէներգիայի մատակարարման ընդհատումներ կամ դրանց պարամետրերի անթույլատրելի արժեքներ.

4) էներգակրի պարամետրերի անթույլատրելի արժեքներ.

5) չարտոնված կողմնակի միջամտություններ.

6) այլ արտակարգ իրավիճակներ:

182. Յուրաքանչյուր կաթսայական տեղակայանքի որակավորված աշխատող պարտավոր է իմանալ և գործել ըստ հաստատված հրահանգների, պահպանել աշխատանքի և հրդեհային անվտանգության կանոնները:

183. Կաթսայական տեղակայանքների օպերատիվ սպասարկման պայմանները պետք է համապատասխանեն նրա հզորությանը, կաթսաների ավտոմատացման աստիճանին, հուսալիությանը և արտադրող կազմակերպության հրահանգների պահանջներին: Անկախ ավտոմատացման աստիճանից, սահմանափակ սպասարկումով կաթսայական տեղակայանքներում հաճախակի գնումներ (առնվազն 6 ժամը մեկ) պետք է իրականացվեն հետևյալ դեպքերում՝

1) առաջին անգամ գործարկված կաթսայական տեղակայանքներում, շահագործման առաջին երեք ամիսների ընթացքում.

2) արտակարգ իրավիճակներում, երբ հնարավոր են գազամատակարարման կամ ջրամատակարարման ընդհատումներ.

3) գանազան թերություններ ունեցող կաթսայական տեղակայանքներում, որոնք չեն ազդում տեղակայանքի անվտանգության վրա, սակայն նվազեցնում են դրա հուսալիությունը:

22. ԿԱԹՍԱՅԱԿԱՆ ՏԵՂԱԿԱՅԱՆՔՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄԸ, ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՓՈՐՁԱՐԿՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԸ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

184. Յուրաքանչյուր կաթսայական տեղակայանք շահագործման ընթացքում դրա սեփականատիրոջ կամ մասնագիտացված կազմակերպության կողմից պետք է ենթարկվի հետևյալ պարբերական ստուգումներին և փորձարկումներին՝

1) անվտանգության ապահովման համակարգի փորձարկումներ՝ ըստ գործարանային հրահանգի, բայց ոչ պակաս տարին 2 անգամ.

2) տեղակայանքի և կաթսայի ներքին ու արտաքին զննում՝ տարին 1 անգամ.

3) հիդրավլիկ փորձարկում՝ նորոգումից և կաթսայի մաքրումից հետո.

4) հիդրավլիկ փորձարկում փորձնական ճնշումով՝ ոչ պակաս 2 տարին մեկ անգամ:

185. Կաթսայի (ջրատաքացուցի) արտապլանային (ժամկետից դուրս) տեխնիկական վկայագրումը պետք է իրականացվի այն դեպքերում, եթե՝

1) կաթսան չի գործել մեկ տարուց ավելի.

2) կաթսան ապամոնտաժվել է և տեղակայվել այլ տեղում.

3) իրականացվել է ուռչումների կամ ճզմվածքների ուղղում, ինչպես նաև նորոգում կաթսայի հիմնական տարրերի եռակցման կիրառմամբ.

4) փոխարինվել է միաժամանակ էկրանային կամ եռման խողովակների ընդհանուր թվի ավելի քան 50 %-ը, ծխակեղ խողովակների կամ ջրատաքացուցի խողովակների 100 %-ը:

186. Կաթսայական տեղակայանքների անվտանգության համար պատասխանատու անձը պետք է ունենա համապատասխան որակավորում, որը հավաստվում է իրավասու անձի կողմից տրված վկայականով:

Պատասխանատու անձի նշանակումը ձևակերպվում է ձեռնարկության հրամանով՝ գրանցելով հրամանի համարը և ամսաթիվը կաթսայի անձնագրի մեջ: Պատասխանատու անձի բացակայության ժամանակ (արձակուրդ, գործուղում, հիվանդություն) նրա պարտականությունների կատարումը պետք է հրամանով դրվի այլ ճարտարագիտատեխնիկական աշխատողի վրա, որն անցել է սույն կանոնակարգի իմացության ստուգում:

187. Պատասխանատու անձը պետք է ապահովի՝

1) կաթսաների պահպանումը սարքին վիճակում.

2) կաթսաների պլանանախագրուշական նորոգման և դրանց տեխնիկական վկայագրման նախապատրաստման ժամանակին անցկացումը.

3) ի հայտ եկած անսարքությունների ժամանակին վերացումը.

4) կաթսաների սպասարկումը ուսուցանված և ատեստացիա անցած անձնակազմի կողմից:

188. Պատասխանատու անձը պարտավոր է՝

1) պարբերաբար զննել կաթսաներն աշխատանքային վիճակում.

2) ամեն օր աշխատանքային օրերին ստուգել գրանցումները հերթափոխային մատյանում և այնտեղ ստորագրել: Առանց տեղական օպերատիվ անձնակազմի ավտոմատ կառավարման տեղակայանքներում ստուգման պարբերականությունը սահմանվում է տեղական հրահանգներով.

3) աշխատանք վարել անձնակազմի հետ նրա որակավորումը բարձրացնելու վերաբերյալ.

4) իրականացնել կաթսաների տեխնիկական վկայագրումը.

5) պահպանել կաթսաների անձնագրերը և պատրաստող արտադրող կազմակերպությունների՝ դրանց հավաքակցման և շահագործման հրահանգները.

6) հակավթարային ուսուցանում անցկացնել կաթսայական տեղակայանքների անձնակազմի հետ.

7) ստուգել կաթսաների շահագործման և նորոգման ժամանակ տեխնիկական փաստաթղթերի

վարման ճշտությունը.

8) մասնակցել սպասարկող անձնակազմի ատեստացիայի և գիտելիքների պարբերական ստուգման հանձնաժողովին:

189. Պատասխանատու անձն իրավունք ունի՝

1) կաթսաների սպասարկումից հեռացնել այն անձնակազմին, որը հրահանգների խախտում կամ դրանց անբավարար իմացություն է թույլ տալիս.

2) ղեկավարությանը առաջարկություններ ներկայացնել կանոնները և հրահանգները խախտող սպասարկող անձանց պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ.

3) ղեկավարությանը առաջարկություններ ներկայացնել կանոնների և հրահանգների պահանջների խախտումը ծնող պատճառները վերացնելու մասին:

190. Կաթսաների և ջրատաքացուցիչների սպասարկմանը ՀՀ «Աշխատանքային օրենսգրքի» պահանջների համաձայն կարող են թույլատրվել միայն 18 տարեկանից ոչ պակաս անձինք, որոնք ՀՀ «Աշխատանքային օրենսգրքի» պահանջների համաձայն անցել են բժշկական ստուգում, ուսուցանված են և ատեստավորված: Կաթսայական տեղակայանքների մեքենավարների և օպերատորների ուսուցանումը և առաջնային ատեստացիան պետք է իրականացվի մասնագիտական տեխնիկական ուսումնարաններում, ինչպես նաև կազմակերպություններում հատուկ ստեղծված կուրսերում: Գիտելիքների կրկնվող ստուգումները պետք է անցկացվեն տարին մեկ անգամից ոչ հազվադեպ: Գիտելիքների արտահերթ ստուգումներն իրականացվում են՝

1) այլ կազմակերպություն անցնելու ժամանակ.

2) այլ տիպի կաթսաների սպասարկմանը անցնելու դեպքում:

191. Կաթսայական տեղակայանքներում պետք է վարել հերթափոխային մատյան՝ կաթսաների և դրանց սարքավորման ստուգման արդյունքների, ջրացույց սարքերի, ջրի սահմանային մակարդակների ազդանշան տվողների, մանոմետրերի, ապահովիչ փականների, սնուցման սարքվածքների, ավտոմատիկայի միջոցների, ինչպես նաև կաթսաների արտափչման տևողության գրանցման համար: Հերթափոխը հանձնողը և ընդունողը պետք է անպայման ստորագրեն մատյանում կաթսաների և հերթափոխների հանձնման և ընդունման մասին: Հերթափոխային մատյանի մեջ գրանցվում են կաթսայատան պետի կամ նրան փոխարինող անձնավորության բոլոր հրահանգները կաթսաների թողարկելու կամ դրանց աշխատանքի դադարեցման մասին (բացի վթարային անջատման դեպքերից): Մատյանի գրանցումները ամեն օր ստուգում է շահագործման համար պատասխանատու անձը, ինչի մասին նա գրանցում է կատարում մատյանի մեջ: Ջրացույց սարքերի ստուգումը արտափչմամբ, ինչպես նաև ուղղակի գործողության ջրացույց սարքերի հետ ջրի մակարդակի իջեցված ցուցումների համեմատումն իրականացվում են ոչ պակաս, քան հերթափոխի ընթացքում մեկ անգամ:

192. Ապահովիչ փականների աշխատանքի սարքինության ստուգումը դրա կարճատև «քանդման» միջոցով իրականացնում են կաթսայի յուրաքանչյուր գործարկման ժամանակ, իսկ աշխատելու ընթացքում ոչ ուշ այն ժամկետներից, որոնք սահմանված են արտադրող կազմակերպության փաստաթղթերով: Կաթսաների և ջրատաքացուցիչների աշխատանքն անսարք կամ չկարգավորված ապահովիչ փականներով արգելվում է:

193. Ռեզերվային սնող պոմպերի սարքինությունը ստուգում են դրանց կարճատև գործարկման միջոցով ոչ պակաս, քան հերթափոխի ընթացքում մեկ անգամ:

194. Անվտանգության ավտոմատիկայի սխեմայի և սարքինության ստուգումն իրականացվում է արտադրական հրահանգների համաձայն: Ստուգման արդյունքները գրվում են հատուկ մատյանի

մեջ:

195. Կաթսան պետք է անմիջապես կանգնեցնել և անջատել պաշտպանության կամ անձնակազմի գործողությամբ՝ արտադրական հրահանգներով նախատեսված դեպքերում, և մասնավորապես հետևյալ անսարքությունների դեպքերում՝

1) շոգե- և ջրատաքացուցիչ կաթսաների համար.

ա. ապահովիչ փականների անսարքության հայտնաբերման դեպքում,

բ. բոլոր սնուցող պոմպերի գործողության դադարեցման դեպքում,

գ. ճեղքվածքների, ուռչումների, եռակցման կարերում բացթողումների, հիմնահեղույսների և կաթսայի հիմնական տարրերի (թմբուկում, կոլեկտորում, խցում, շոգեջրատարաթողման և ջրաիջուցիկ խողովակներում, հրախողովակում, կրակե տուփի մեջ, հնոցի պատյանում, արտաքին գատիչում, արմատուրում) կապի խզում,

դ. ջահերի մարումը հնոցում՝ խցային վառման դեպքում,

ե. լարման անհետացում բոլոր հսկիչ և չափիչ սարքերում, հեռագործ և ավտոմատ կառավարման սարքվածքներում,

զ. կաթսայական տեղակայանքում սպասարկող անձնակազմին կամ կաթսային սպառնացող վտանգի դեպքում,

է. հրդեհի առաջացման դեպքում,

ը. գազի արտահոսքի կամ արտահոսքի կասկածի կամ արտահոսքի հանգեցնող իրավիճակներում:

2) շոգեկաթսաների համար՝ սույն կետի «1») ենթակետում թվարկած դեպքերին ավելացվում են.

ա. ճնշման բարձրացման դեպքում կաթսայի թմբուկում ավելի քան 10 %-ից բարձր, քան թույլատրված է դրա հետագա աճի դեպքում,

բ. ջրի մակարդակի՝ թույլատրելի ամենացածր ստորին մակարդակից իջնելու դեպքում,

գ. ջրի մակարդակի՝ թույլատրելի ամենաբարձր վերին մակարդակից բարձրանալու դեպքում,

դ. բոլոր ջրացույց սարքերի աշխատանքի ընդհատման դեպքում:

3) ջրատաքացուցիչ կաթսաների համար, ի լրումն սույն ՏԿ-ի 195 կետի 1) ենթակետի.

ա. կաթսայի միջով անցնող ջրի ծախսի փոքրացում՝ թույլատրելի նվազագույն արժեքից,

բ. ջրի ճնշման իջեցում՝ կաթսայի տրակտում թույլատրելից ավելի ցածր,

գ. կաթսայի ելքում ջրի ջերմաստիճանի բարձրացումով մինչև 20 °C-ից ավելի ցածր հազեցման ջերմաստիճանից, որը համապատասխանում է կաթսայի ելքի կոլեկտորում բանվորական ճնշմանը:

196. Կաթսայի անսարքությունների, կամ անսարքությունների հանգեցնող հանգամանքների դեպքերում, եթե չի դադարեցվում կաթսայի աշխատանքը, ապա կաթսայի սպասարկումը պետք է իրականացվի տեղում մշտական հսկողության ռեժիմով՝ մինչև անսարքությունների կամ դրանց հանգեցնող հանգամանքների վերացումը:

197. Գազային վառելիքով աշխատող կաթսաների համար գազի մատուցումը կաթսայի գազատարներ պետք է անմիջապես դադարեցվի անձնակազմի կողմից նաև ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 22-ի «Անվտանգության պահանջները գազի տնտեսությունում տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N 2399-Ն որոշմամբ սահմանված դեպքերում: Օպերատիվ անձնակազմը պետք է գրանցում անի մատյանում կաթսայի վթարային դադարեցման պատճառների և դրանց վերացման համար ձեռնարկված միջոցառումների մասին:

198. Կաթսան պետք է կանգնեցվի կաթսայի սարքին վիճակի և անվտանգ շահագործման համար պատասխանատու անձի կարգադրությամբ այն դեպքերում, երբ՝

1) խուղակներ են հայտնաբերվում կաթսաների տաքացման մակերեսների, շոգե- և ջրատարաթողման, ինչպես նաև ջրափջեցման խողովակներում, շոգետարերում, կոլեկտորներում, սնուցող խողովակաշարերում, ինչպես նաև արմատուրի, կցաշուրթերի և գլոցման միացումների հոսվածքներում և շոգեխուղումներում:

2) շոգեկաթսայի թմբուկում ջրի մակարդակի բոլոր հեռագործ ցուցիչների շարքից դուրս գալու դեպքում:

3) սնուցող ջրի որակի կտրուկ վատացում՝ սահմանված նորմերի նկատմամբ:

199. Կաթսայի վթարային կանգառի հնարավոր պատճառները և կարգը պետք է ցույց տրվեն արտադրական հրահանգներում: Կաթսայի վթարային կանգառի պատճառները պետք է գրանցվեն մատյանում:

200. Կազմակերպությունը պետք է ապահովի կաթսաների ժամանակին նորոգումը՝ պլանանախազգուշական նորոգման հաստատված գրաֆիկի համաձայն, և գործարկման ու կարգաբերման աշխատանքների անցկացումը հիմնական նորոգումից, արդիականացումից, վերակառուցումից, վառելիքի տեսակի և ջրային ռեժիմի փոփոխումից հետո: Նորոգումը կատարում են տեխնիկական պայմաններին համաձայն՝ սույն կանոնակարգի պահանջներին համապատասխան:

201. Կաթսայական տեղակայանքներում պետք է վարել նորոգման մատյան, որի մեջ մտցվում են տեղեկություններ նորոգման աշխատանքների կատարման և կաթսաների մաքրման և լվացման նպատակով կանգառի մասին:

202. Նորոգման աշխատանքների մասին տեղեկությունները, որոնք բերում են կաթսաների ժամկետից շուտ իրականացման անհրաժեշտության, ինչպես նաև նյութերի և նորոգման ժամանակ կիրառված եռակցման մասին տեղեկությունները, պետք է մտցվեն կաթսայի մատյան:

203. Կաթսայի թմբուկում, խցում կամ կոլեկտորում, որոնք միացված են այլ աշխատող կաթսաների հետ ընդհանուր խողովակաշարերով (շոգեմուղ, սնող, դրենաժային և ջրթող գծեր և այլն) աշխատանքների իրականացման սկզբից առաջ, ինչպես նաև կաթսայի ճնշման տակ աշխատող տարրերի գնումից կամ նորոգումից առաջ կաթսան պետք է առանձնացվի բոլոր խողովակաշարերից խցափակիչներով կամ էլ անջատվի: Անջատված խողովակաշարերը հարկավոր է խցանել: Գազային վառելիքի աշխատանքի ժամանակ կաթսան պետք է հուսալիորեն անջատված լինի ընդհանուր գազատարից՝ կաթսայի սպասարկման հրահանգների համաձայն:

204. Վենտիլների, սողնակների և արգելապատնեշների վրա խողովակաշարերի, շոգետարերի, գազամուղների և գազանցքերի, ինչպես նաև ծխածուծերի, արտափչման օդամուղերի և վառելիքի սնուցիչների թողարկման սարքվածքների վրա պետք է կախված լինեն «Չմիացնել՝ աշխատում են մարդիկ» բովանդակությամբ պլակատներ: Ծխածուծերից, արտափչման, օդամուղերի և վառելիքի սնուցիչների թողարկման սարքվածքներից անհրաժեշտ է հանել հալվող ներդիրները:

205. Կաթսայի անջատման ժամանակ կիրառվող խցափակիչները, որոնք տեղակայվում են խողովակաշարերի կցաշուրթերի միջև, պետք է լինեն համապատասխան ամրության և ունենան ելուստային մաս (պոչամաս), որով որոշում են դրված խցափակիչի առկայությունը: Կցաշուրթերի և խցափակիչի միջև տեղակայվող միջադիրները պետք է լինեն առանց պոչամասերի:

206. Կաթսայական տեղակայանքի տարրերի (հնոցների և թմբուկների մեջ), ինչպես նաև գազանցքերում, օդանցքներում և ծխագազերի հեռացման խողովակներում աշխատանքները պետք է անցկացվեն դրանց վնասակար գազերից օդափոխելուց և օդի՝ գազերով հագեցվածության ստուգումից հետո կաթսայական տեղակայանքի տարրերում, գազանցքերում, օդանցքերում և

ծխագազերի հեռացման խողովակներում 306 Կ-ից (33 °C) ոչ բարձր ջերմաստիճանում, կաթսայական տեղակայանքի պետի գրավոր համաձայնությամբ (կարգազրով): Հնոցների, թմբուկների, գազանցքերի, օդանցքերի, ծխագազերի հեռացման խողովակների մեջ մնալու ժամանակը, ինչպես նաև հանգստի տևողությունը, որոշում է կարգազիր տվող անձը՝ կախված աշխատանքի պայմաններից և բնույթից, կարգազրի տեղում նշելով «Հատուկ պայմաններ»:

**Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար**

Դ. Սարգսյան